




Ա Մ Ս Ա Գ Ի Ր


ԼՕԳԵՅԻՆ, ԲԱՆԸՄԻՐԱԿԱՆ, ԳԻՐԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԼԴԱՔԵԼԿԱՆ



ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԶԱՆ ՍԻՆՍԵՆՅ



ՅԵՐՈՒՍԼԱՂԱՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1870



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹԻՒ 10.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀԱՅ ՏԵՄԲԵՐ 31.
1870.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Բ. Ա. Ն. Ս. Ս. Ի. Բ. Ա. Կ. Ա. Ն. ԵՒ Գ. Բ. Ա. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Խ Ա Ճ Ի Ա Ջ Ա Տ ՈՒ Թ Ի Ի Ն

ԻՆչ է խղճի աղատութիւնը, և
քննչ քանի վրայ կը կայանայ: Այլ հար-
ցրե՛նք գարուս երեւելի գիտնականին
մէկը՝ ի ներկայութեան գրող-խոսող
կամ առի, և կրտսի հմտօղի լեզուա-
և վսեմ իմացուածով իւր հարցմանը
պատասխանել: «Արդեօք խղճի աղա-
տութիւն ըստ ճիշտ բարոյական օրէն-
քնն տորի տակ առնելով անոր սահ-
մանէն անդին անցնելու աղատու-
թիւնն է: Այլ, այլ բոլորովին հակա-
ռակը: Բայտ իս խղճի աղատութիւն
կամ աղատ խիղճ ըստ ճիշտ, նոյն բարո-
յականութեան օրինաց ծայրէ ի ծայր
հետեւելու աղատութիւնն է, ըստ
որում սրբազան օրէնք մի կայ որ կը
հրամայէ բարիք գործել, և չար գոր-

Ե

ծելը կ'արգելու: Իմաստակ մարդիկ
կրնան մարդկային քննելութեան մե-
ջէն մտա մի անձինքներ համոզել թէ
չկայ այսպիսի օրէնք մի, այլ բոլոր
մարդկութիւնը անոնց գէ՛մ իւր ձայնը
կը վերցրնէ և կը խոստովանի այսպիսի
օրէնքի մի գոյութիւնը: Կուգէ՞ք որ
հաս անմիջապէս փաստ մի բերեմ:
Պուք սիրելի ընթերցողք, գրեթէ
բոլոր մարդկութիւնը կը ներկայացը-
նէք, արդ թնկ հրամայէ յատարել
լիցնէ այն իմաստակը և եթէ կրնայ իւր
ճարտարութեան և նորամտութեան
փտահելով անբարոյականութիւն գործ
մի իբրեւ բարոյական ցոյց տայ մեզ
եւ գովաբանէ զայն: Վասնիչնեքու
մեջ ամենէն գարշելիին համար ըս-

22

ուած է թէ՛ իւր Տէրը գիշերուան մթին ծախեց : Այս առուծախքը գիշերուան խոր խաւարին մէջ պատահեցաւ և սակարկութիւն լրանալով գլուխ տարուեցաւ : Բայց հրապարակի մի մէջ լոյս ժամանակ չկրնար ըլլալ : Հոս անձնական շահատիրութիւն մի կայ, և եթէ ձեզ ըսելու ըլլամ թէ՛ մարդս իւր սրարտաւորութիւնը կատարելէն աւելի աղէկ է իւր անձնական շահը փնտռել, հաւատացէք որ ամէնրդ ալ ինձի դէմ կը յարձառէիք : Ահաւասիկ այս է մարդկային խիղճը ըսածնիս բոլոր իւր մեծութիւնն ու վեհութեամբը : Աղգային անհատ մի որ և է աղղեցութեան տէր ալ եղած ըլլայ, կը տեսնես որ ընդ հանրութեան ստացուածք եղած գոյք մի յափշտակելու համար լոյսէն փախչելով՝ կրօնաւորի մի գիշերադէմ վերարկուին տակ կը դործէ, և բարձրագոյն եկեղեցականի մի պատկառելի անձին պատուոյն դէմ զրպարտութեան և հայհոյութեան նետեր արձակելու համար անձանօթ և անանուն հովա նաւորութեան ներքեւ մտած իրր ՚ի մթան զանոնք կ'արձակէ : Ինչ են աւսոնք, եթէ ոչ ներքին ձայնին՝ որ նոյն է՝ խղճին յանգիմանութենէ ազատ մնալու միջոցներ :

Այն իմաստակ մի գայ ինձ ըսելու ըլլայ, կը խաբուիք, խիղճը ըսածը այդ չէ, այլ անիկայ բարեխառնութիւններէ ու չափաւորութիւններէ կախում ունի, պատասխանատուութեան տակ չէ : Այն ատեն ես ալ հարբած Փիլիպպոսի բրած անիրաւութիւնը սթափեալ Փիլիպպոսին կը բողբեմ (1), ծուռ արամբանութեամբ

չայցեալ խորհրդոյս դէմ կը բողբեմ հոգւոյն վիայութիւն : Այս աշտախի իմաստակը նոյն իսկ դործուած յանցանքին դէմ կը կանգնեցնեմ, այն անիրաւ դատաստանին, մանաւանդ անոր որ յետոյ իւր իրաւացի վճռոյն յաջողեցաւ : Այնպէս որ այն դողդոջուն շրջութիւններն և անոր արդարացի բարկութիւնը տեսնելով կ'ըսեմ, ահաւասիկ այս է խիղճը՝ զոր ես նորէն կը պատուեմ : Ահաւասիկ այս է որ իւր ազատ և սրտառու աղաղակին մէջ կը փայլի : Խղճին այս աղաղակը այս ձայնը ինձի համար մարդկային սրտին միայն ձայնը չէ, վասն զի այս ձայնը շատ անգամ այնպիսի բաներ կը հրամայէ գործելու՝ որոնք իրենք քով արժողութիւն մի ունին, և երբ աւոր հետեւելով իւր չար կիրքերը յագեցնելու ըլլայ, այն ատեն անոր դէմ կ'եննէ խոժոռելով ու տրամելով : Այս կ'ըսեմ թէ խիղճը ըսածը լստուծոյ ձայնն է, և Արիւստին հետ համաձայնելով կ'ըսեմ թէ լստուած մտոյ խղճին մէջ բովանդակ մարդկային սեռին վարժիչն ու դատաւարակն է : Առանց խօսքս ոլորցնելու և կրակը մօլոր՝ համարձակ կ'ըսեմ թէ՛ յայտմ մտան մեզ ամենակարեւոր բանը այս ներքին ձայնին հնազանդելն է, ճշմարիտ ազատութիւնն իւր կիրքերը զսպելն է, և ըստ ասից Անեքայ՝ լստուծոյ հնազանդելն է (1) :

Վերադառնալով պատասխանատու են խղճի այս մեծ ազատութեան : Այնպէս որ խորհելու ազատութիւն վրայօք խօսիմ, բայց չեմ ուզեր որ այնպէս կարծիք ընող ըլլայ իմ վրաս իբր թէ

ճիշտ մի տուաւ : Ասոր վրայ կ'եննէ ձայն բարձրացնելով ըստ, և բողբեմ հարբած Փիլիպպոսէն առսթափեալ Փիլիպպոս որ ինձի իրաւունք ընէ : Ասոր վրայ թագաւորը ահաւորով արգարութիւն ըրաւ կնկան :

(1) Parere Deo libertas.

(1) Օր մը կնկան մէկը մեծին Աղէքսանդրի հօրը Փիլիպպոս թագաւորին ներկայացաւ իւր կըրած մէկ զրկողութեանը համար բողբելու, թագաւորը նոյն միջոցին հարբած ըլլալով անիրաւ վեր-

սոյճի ազատութեան և խորհելու ազատութեան մէջ տեսակ մի բնորոշ մութիւն հանել է միտքս. քան լիցի խորհելու ազատութիւնը իբրեւ մէկ անգին ստացուածք մի կ'ընդունիմ ես, որպէս թէ աշխարհ մի շահած ըլլա՛ք, ես զանիկայ չորս ձեռքս ամուր բռնած եմ. անիկայ ըստ իս սա երեք յատկութիւններովն ճանչցուած է. այսինքն՝ խորհիլը ազատ է՝ երբ ներող է և երբ ուրիշին հակառակ կարծիքները չմերժեր: Այլ և ազատ է՝ երբ քննութեան բովէ անցած է. իսկ երբ արտաքին ճնշումէ մի յառաջ եկած է, ազատ չէ: Այստեղն ուր որ ալ ըլլայ, որ հովուին ցուպին տակ ալ որ գտնուի, դարձեալ ոչտար է: Այլ որդե՛ ազատ չեմ կոչեր այն մտածութիւնը՝ որու եզրակացութի ազատութիւն չէ: Այն մտածութիւնը որու եզրակացութիւն է գերութեան վարդապետութիւնը, իւր քննութե՛ն բովին մէջ չկրնար ազատ լինել և ոչ իւր եզրակացութեանցը մէջ: Աւրեմն ըսել է որ խորհելու ազատութիւնը լիապէս բաւական չէ ինքն իւրեան, և ոչ բաւական է բարոյական կենաց: Տգիտութիւնը, առանց տարակուսանայ անբարոյականութեան միջակ մի է, ո՛վ կ'ուրանայ դայս, բայց և այն պէս մարդս բարոյական մարդ ըլլալու համար բաւական չէ որ միտքը միայն լուսաւորուի. նոյն իսկ լուսաւորեալ միտքն ու հանճարն անգամ կրնայ մեծ յանցաւոր մի ըլլալ. և գիտեմ ինչ որ կ'ըսեմ, և օրինակները դիմայնիս ունինք. որոնց մէջ այնպիսիներ կան որոնք առաւել իրենց սարձեցած գիտութեամբը՝ թէ՛ զիրենք յանցաւոր ըրած են և թէ՛ անմեղները իրենց հետ տարապարտ յանցանքի մէջ թողուցած են հասարակութեան առջեւ, անբարոյականութիւն

և խորհելու չարաչար ազատութիւն, որ իրենց տեսակին մէջ անգամ նըւաղ են բարեբաղդաբար:

Սա ալ կ'ըսեմ թէ՛ խորհելու ազատութիւնը այն ժամանակ միայն անկախ է, երբ բարոյական անձին խորութեանը խելք հասուցած է. թէ՛ որ միայն իւր հաճոյիցը և մտաց հեշտութեանը համար խորհելու ազատութիւն կ'ըսէ մէկը ու կ'առնուէ կ'անցնի զայն գովաբանելով, երբ գէշ օրեր վրայ հասնելու ըլլան, ալ չկրնար զայն սրաշտոյանել, անգի կուտայ անորմէ: Վանի քանի մարդիկ տեսած եմք ամօթալի կերպով զայն ուրացողներ նոյն իսկ մեծանուն հանճարեղաց մէջ. և ո՛վ չճանչնար այն գրչի տէրերը Բէլլալէրը, որոնք իրենց ապրանքները մէկ բանակէ մի ուրիշ բանակ կը տանին աւելի ստակ տուող մի գտնելու համար, որ ըսել է թէ ծախած են իրենց հանճարն ու գրիչը, և ուր կը մնայ հոն խորհելու ազատութիւն քարոզելին: «Հանճարը ամենէն աւելի չոր գործիք մի է, երբ խղճին չճառայեր,» (1) ըսաւ բարոյագէտ իմաստնոյն մէկը:

Իսկ երբ խորհելու ազատութիւնը խղճի ազատութեան հետ միաբանելու ըլլայ, այն ժամանակ անոր գաղափարն ոչ միայն իմ ուղեղիս մէջ կ'ըլլայ, այլ իմ համողումս եղած կը համարուի, և իմ գործս կ'ըլլայ զայն սրաշտոյանելու ի շնորհս և բնորոշմամբնուէ: Վիտեմ որ ես իբր բարոյական անձն՝ լուսեայն երգում տուած եմ ընկերութեան որ յամենայնի՛ ճըշմարիտը խօսիմ, և ամենեւին ճշմարտութենէ մի չխուսափիմ թէ և սուղի նստելու ըլլայ ինձ այն, և ինչ ալ

(1) L'intelligence est le plus pervers des instruments quand elle n'est pas au service de la conscience. BENJAMIN CONSTANT.

որ ըլլայ ճշմարտութեան ենթակայ եղածները : Վիտեն ընթերցողք, որ երբ Վալիլէոս ատենանին դիմաց կանգնած էր, որ ծանրութեան օրինաց քննութեան համար կապնած էին, և հոն իբրեւ մէկ յանցաւոր մի կոչուած էր, հոն իւր խիղճը ստիպեց զինքը բռնել. « բայց ստիպին երկիրը կը դառնայ : » (Վ, աղատութե՛ գրօ, չսիր որքան հարուածներ ընդունի և գնատակներէն բղբաւի, այնքան իւր յարգը կ'աւելնայ մեր սէրին և այնքան աւելի սիրով անոր կը պլլուինք : խորհելու աղատութեան վրայ ինչ որ բախ, նոյնը կրնամ բռնել նա և բոլոր աղատութեանց համար, որոնք չեն կրնար արմատ ձգել մինչեւ որ բարոյական կենաց վրայ չարատաւատուին, և ասոնց ամենուն համար ընդհանրապէս Սիրտացի սա մեծ խօսքը կը յարմարցնեմ, ուր իւր ժողովուրդասիրութիւնը ցոյց կուտայ. « Վտկար եղէ՛ք մի չէ՛ որ ամեն քամիի դիմաց ծռուի. ես զանիկայ արգարութեան երկրին վրայ անկեցի, և ոչ որ և ոչ զօրութիւնի մի՛ ալ եւս կարող է կործանել զայն : » Սերենն ընդգիմանալու համար մեզ ուժ տուողը խիղճն է, կամ պարզ բռնմ' անիրաւութեան մի, սոտութեան մի, մատնութեան մի, անձնական շահու և այլոց զրկողութիւնն ընելու ներքին մղման մի դիմաց չխնարհելու համար մեզ քաջալերութիւն և դէմ դրնել տուողը աղատութիւնն է խղճի, աղատութիւնն է խորհելու և խօսելու և այլն :

Ինչէ՛ն է որ մարդս իբրեւ պարզ գործիք մի չկրնար գործածուիլ, բոլորի մի մասն ըլլալէ կը դադրի, վասն զինա արգարութեան և ճշմարտութեան ծառայ և գործիք ըլլալու կոչուած է, ասկէ կը բխէ ահա ան-

հատի մի յարգը : Սարգկային իրաւունքն հաստատողը խիղճն է, նա է մեզ տկնածելի իշխանութեան տէր ընողը. ուստի որ և իցէ յանցանք մի որ այս խղճին դէմ կը գործուի՝ որբաղձութիւն կը համարի : Ստիկ ըրէք կը խնդրեմ, արդոյ ընթերցողք, Վենինիկ Վմերիկայի գերութեան օրինաց խախտման այն մեծ տո պիտի տամ, կ'քանի տողերը. « Ի՛նչ բան է « այս, անմահ անձ մի իւրեան ստա « ցուածք ընել. ճշմարտութեան և « առաքինութեան համար ստեղծ « ւած մի իւրեան ծառայեցնել : Ի՛նչ « բան գործիք մի դարձնել այն ի « մայցական մեքենայն որ արեւու ճա « ռագայթի նման սրարտուց գողա « փարը կը լուսաւորէ, և բոլոր տիե « ղերքէն աւելի Մոտեճոյ մէկ աղ « նուտոյն պատկերն է : Սէ, ոչ, աչ « խարհիւ մէջ ամէն ինչ կրնայ ստա « նալ մարդս իրեն համար, բայց բա « րոյական անձ մի չկրնար անշունչ « իրի մի անդ գործածուիլ : Վրեն ու « աստղերը կրնայ ստացուիլ, բայց « բանական մարդոց ամենեւին և ոչ « մէկ յետինն ու անարգը կրնայ բա « տացուածք ըլլալ : Վմեն ինչի ձեռք « երկնցուր, բայց ասոր ամենեւին « մի գտչի. բոլոր մտաւոր աշխարհը « պիտի բռնէ քեզ այն ժամանակ. » քաջէ՛ ձեռքդ » :

Կը յիշէ՛ք արգեօք լեզուագէտ ընթերցողք Վիկտոր Զիւկայի սա հետեւեալ չափով տողերը.

Տէր, դու կարես՝ ըստ հաճոյից յափշտակել զԵւրոպէն ի Մեծ Կարողութե և զԱսիա ի Մեծ մեծեան, բայց ոչ բնաւ և ի վաղիւն ի յԱրարչէն :

Ասոր վրայ սա ալ կ'աւելցնեմ ես, դուն և ոչ իսկ այսօր կրնաս ձեռքէս իմ խիղճս խլելու : Ինչգիտացնին համար կ'ըսեն թէ՛ փառք իւր զար-

մանայի օրինացը, որ իւր անակին մէջ
ամուր բերդի մէջ եղածի պէս կ'ապ-
րի, և ես ալ կ'ըսեմ թէ՝ եւ որ իւր
խղճին կ'ապաստանի, տուն տեղ ալ
ունենալու չըլլայ, նա անտառիկ ամբո-
ցի մէջ կը համարի: Այս բանը ու-
րիշ հետեւութիւն մի եւս հանել
կուտայ ինձ խղճի ազատութենէն:
Այս ազատութիւնն է արդարեւ որ
մարդկային ճշմարիտ հաւասարութիւն
կը հիմնէ: Անք իրարմէ խելքով է
որ կը զանազանիմք, մարդոցմէ մէկ ե-
րեւելի մաս մի կայ սոյն լուսաւորեալ
ժամանակիս մէջ անգամ, որ ամենեւ-
ւին հոգեւորն չէ միտքերն լուսա-
բերու, արտասալով կ'ըսեմ որ ասոնք
իրենց օրական հացն հանելու մեծ
տագնադին մէջ ընկղմուած են: Անք
այս անհաւատարութիւնը չեմք ըն-
դունիր, այլ եռանդագին կը բազ-
մամբ որ անհետ ըլլայ այն մեր մէջէն,
և բարեբաղդ կը համարիմ զիս ողջու-
նելու այն եղբայրական մեծ շարժու-
մը որ Վրդիս մէջ կրտսեանով՝ լուսա-
ւորութիւնը բոլոր հայաբնակ երկիր,
ներս մէջ ընդհանրացնելու փու-
թով մի, բայց որչափ ալ փոթիս ու-
ջանքերնիս մեծ ըլլայ բոլոր հասարա-
կութեան միտքն ու խելքը լուսաւո-
րելու համար: Կորելի միջոցներն անոր
ցոյց տալու, չենք կարող խտրաւ այս
անյաղթելի անհաւատարութիւնները
անհետ բնել: Խղճին տիրած իշխա-
նութեանը մէջ չկան այս զանազա-
նութիւնները, հոն ամենէն տգէտը,
ամենէն աղքատը թագաւոր մի է,
մարդկային հանձարն անգամ խղճին
դիմացը կը խոնարհի:

Այն խորհրդածութեանց կարգը,
ուսկէ պէտք էր հարկաւորապէս որ
սկիզբն տայի իմ այս բանախօսութեւս,
կը թողում զայն, առանց մոռնալու
երբէք որ խիղճը կապակցութիւն մի

ունի միշտ մարդկային ընկերութեան
հետ, և հոն մեծամեծ արգելքներու
կը սրատահի իւր ազատութիւնը,
Վանի որ մարտը է նա, երբէք վախ
միշտնի, եթէ մոռնողեան մի, կամ
աւելի ամփոփելով՝ քաղաքի մի հա-
ստրակութեան բարեյականը զօրաւոր
ու հաստատուն է, հոն խիղճը ամեն
արգելքներու կը յաղթէ, ուր տեղ որ
իրենց անհատական և ընկերային պար-
տաւորութիւններն ճանչալ մարդիկ
կան, հոն կը յաղթանակէ փառօք
արդարութիւնն և ամեն իրաւունք:

Խղճի ազատութիւնը իրաւ է ա-
ւելի որոշ և մեկին կը նշմարուի կը-
րօնական աւելնչութեանց մէջ, և նե-
րողութեան մասին թնդ չարածի Աւ-
րոպայի իւր բոլոր ազատասիրական
քարոզութիւններով, ինչ որ կը տես-
նես Թուրքիայի ներքին գաւառաց
մէջ սոյն ազատութեան գէմ բռնու-
թիւններ, անկէ աւելին կրնայ նոր-
բազնին աչքը տեսնել Աւրոպայի ա-
մենէն ծագկեալ և քաղաքականացեալ
մայրաքաղաքաց մէջ: Բայց իմ գիտա-
ւորութիւնս այն բնէլ չէ՝ թէ խղճի
ազատութիւնը կրօնական ընկերու-
թեան մէջ ինչ արգելքներու կը հան-
դիպի, որոնք ինչպէս ըսի կրօնի ամեն
հաստատութեանց եւ նախադաշար
մանց մէջ կը սրատահի անպակաս, ըստ
որում կրօնն ունի իւր առանձին ի-
րաւունքը, նշանն եւ դրօշը, որոնց
դպչելու չէ բնաւ: Իմ ըսելիքս միայն
ընկերական հաստատութեանց կը վե-
րաբերի, թէ և նոյն հաստատութիւն
կազմող անգամք կրօնականք եղած ը-
լան, բաւական է որ խնդիրը աշխար-
հային եղած ըլլայ, որու մէջ խիղճը
կը բռնադրօսի, բռնութիւն անասնձ
կ'իշխէ, և շահաւէր մարդիկ և շատ
անգամ եւս երկշտ սրտեր՝ անոր գի-
մաց կը խոնարհին, խղճելով իրենց

ողւոյն մէջ խղճին ձայնը: Աւտիկ կա-
տարեալ գերութիւն , որ քան զմար-
մնոյ գերութիւնը գմնգակ է և ար-
գարութեան զխմոյ ինքն է սրտաս-
խանատու : Հոս եթէ բնթերցողք
կը ներեն՝ օրինակ մի մէջ բերել կը
համարձակիմ, օրինակ մի որ մեր գի-
մաց 'գործուեցաւ և գեռ կը գոր-
ծուի, որու բոլոր հասարակութիւնը
ծանօթ է, բայց թերեւ կայ անոր մէջ
մաս մի որ չիլ ակամբ կը նոյն գործոյն
և բողբոլին տարբեր կերպարանք մի
կը նշմարէ հոն : Թերեւս գու շտկող-
ներ եղան արդէն որ սոյն արարաւ-
ծոյս թատերաբեմը Փարաւոններու
երկրին մէջ կը գործուի : Սովե-
տի ժամանակ Ատուծոյ ընտիր ժողո-
վուրդ մի մարմնաւոր գերութեան
չղթաներով պահուած էին . բայց գո-
նէ խղճի ազատութիւն կը վայելէին,
բռնութիւնը անոնց սրտին և մարմնի
երբէք չէր կարողացած տիրել . բայց
հիմակ ցաւօք սրտի կը տեսնենք որ
ամբողջ հասարակութեան խղճին կը
տիրէ մասնաւոր աղգեցութեան մի
ուժ : Բռնաբարութեան ենթակայ
եղողն է ազգայնութիւն շահը, բռնա-
բարոյն է մասնաւոր շահախնդրու-
թիւնը : Հոս կարեւոր կը համա-
րիմ խոստովանիլ, սոյն խնդիրն յու-
ղուած ժամանակին, ընկերական սրբ-
տաւորութիւնը իւր սահմանէն և
օրինաց պատշաճ կարգէն դուրս ե-
լաւ . իրաւունքը զոհուեցաւ փոխա-
դարձ թշնամանքներու և անասելինա-
խատինքներու : Պատիւն միշտ սուրբ
է, թէ և անհատի մի ըլլայ, և զանի-
կայ կոստողը սրբապիղծ է : Անք
այս թշնամանաց աստարեղին մէջ ոտք
չկոխենք . մեր զէնքն ըլլայ արդարու-
թիւնը, և մեր պաշտպանածը խղճին
ազատութիւնը . և մինչեւ անգամ
բարեկամական ձեռք երկնցները իրա-

րու . Այնիմ և Արօշէն երկու թըշ-
նամի վեհապետք, երկուքին ձեռքն
ալ մարդասպան սուրեր, բայց երկու-
սն եւս իրարու հանդիպած ժա-
մանակ մարդկային գորովով սրտե-
նին կը յուզի : Հոն սրտիւն ան-
գամ, որ կենաց հետ հաւատար է, չը
վերաւորի, այլ կը յարգուի : Սոնի
յուշիս ամոյ պարբերականը և յա-
ւերածը որ ընդդէմ հաճութեան
Աննապատիւ Սրբալան հօր և բոլոր
միաբանութեան հրատարակուեցաւ
նախորդ խմբագրատետի անդգոյշ և
անփորձ անօրէնութեամբը, այս սահ-
մանս ոտնակոխ բռաւ, փոխանակ ա-
նիրաւութեան մի դէմ յարձակելու՝
պոտուոյ դէմ խիզախից : Անք՝
ինչպէս ըսինք, սոյն հոկտեմբերի Սի-
օնիւս կը փութանք մեր բարեկամին
ներողամտութեան հետ մէկ տեղ մը
տերմական ձեռք կարկառել, առանց
երբէք դադրելու բռնութեան մի
դէմ բողբոլել և արգարութիւն պա-
հանել : Անցեալը մոռնանք, ներկոյն
քննենք, և ասպագայն ասպահովենք :

(Շարունակելի) :

ՃԾՄԱՐՏՈՒԹԻՒՆՔ

Սոնի սուղին հատորի յառաջա-
բանութեան մէջ, կը յիշեն անշուշտ
սիրելի բնթերցողք, որ մեզ անցեղի
սկզբունք դրած էինք երբէք կռուոյ
և տարապարտ վեճերու մէջ չզաղիլ,
և ոչ երբէք նախադարձակ լինել որ և
է մէկուն դէմ, այլ միայն պաշտպա-
նողական դիրք մի ունենալ ի դիպ-
ուածի եթէ սուրբ Աթուոյն պատ-
ւոյն դէմ օտար յարձակմանը մի լինի
Այն սկզբունքն չորս տարի ամենայն

երկիւղածութեամբ յարգուեցաւ, ինչպէս յայտնի է լրջամիտ հասարակութեան: Բայց հինգերորդ տարին սկսելուն, երբ նորա խմբագրութիւնը անփորձ գրչի մը յանձնուեցաւ, յիշեալ մեր սկզբունքը որ ընդհանուր սկզբունք մի է, ոտնակոխ եղաւ ՚ի մեծ ցաւ մեր եւ բովանդակ միաբանութեան: Թէպէտ և այսպիսի յետագէժ ընթացքի մի գէժ գիտողութիւններ եղան, սակայն որոշուած էր արդէն գէթ միամեայ շրջանը լրանալ: Հետ ժամանակ շանցաւ՝ յանկարծ Սիօնի երկիւղած էջերը պատերազմի դաշտի փոխուեցաւ, նորա սկզբունքը բոլորովին մոռցուելով. և այս կռուոյս պատճառ տուաւ Ղէքսանգրիոյ մէջ հանգուցեալ Վարիզ հանրմին կտակը: Ղմեն. Սրբազան Պատրիարքը այս խնդրոյս վրայօք նամակներ և տեղեկութիւններ տաացաւ իւր գործակալէն և Հակոբեան մեծապատիւ Թագաւոր Էֆէնտիէն. Գժրադարար սոյն միջոցիս սուրբ Մթողոյս և Ղատին վանուց մէջ սուրբ Տեղեաց մասին վէճեր ծագած ըլլալուն, հարկադրեցաւ Ղորին Ղմեն. Սրբազնութիւնը սոյն կտակի խնդրոյն համար եկած տեղեկագիրներն ու նամակները՝ քանի մի վարդապետներէ բաղկացեալ մասնաժողով մի յանձնել որուն անգամ էր նաև Սիօնի խմբագիրը, պատուիրելով որ ըստ օրինի քննուի յիշեալ խնդիրը և հարկաւոր միջոցներն ՚ի գործ դրուի:

Սասնաժողովը տեսնելով Ղէքսանգրիոյ մէջ իրենց կրօնակից եղբոր և Ս. Մթողոյս գործակալին անարդէիլը, արդարապէս խոժուեցաւ, միւս կողմէն եւս յարմար առիթ գտաւ, այս խնդրոյս մէջ այնպիսի անձնական ինքնիշխան խառնել առ նոյն իսկ Սրբազնութիւնն, որ իւր ամենազաւ

ղիճակին մէջ՝ բարեմտութեամբ զանոնք կը մեկնէր: Յիշեալ ժողովը անմիջապէս իւր խորհուրդը կը կազմէ, և նորա հասուն խորհրդածութիւններէն և քննութիւններէն կը ծագէ յունիս ամսոյ Սիօնի անվայել յարձակումը ընդդէմ պատուոյ Սեծապատիւ Հակոբեանց: Ինքնիշխան մէկըն էր նաև յիշեալ կտակի խնդրոյն մէջ առաջնորդական խնդիր մի եւս խառնել որու վրայօք սուրբ Մթողոյս երբէք հետապնդութիւն միջոց տուած չէր, բաւական համարելով միայն Եփեսոսի մէջ իւր կառուածոցը հսկել եւ զանոնք յօգուտ սուրբ Մթողոյն և ազգին պայծառութեանը համար տնօրինել:

Ղորին Սրբազնութիւնը Ղատինաց վէճերովը զբաղած և մինչեւ անգամ զիշերները՝ Գամասկոսի Վսեմ. Վալի Փաշային և Սիւնիֆ Էֆէնտիէն քով հարցաքննութեանց ներկայ դառնուելով՝ երբէք ժամանակ չէր ունեցեր Սիօնի պարունակութեան վրայ օրինաւոր գիտողութիւն ընել, որու մէջ չէր յուսար ալ այն աստիճանի վտանգաւոր յօգուածներ դրուիլ. նմա նապէս Եփեսոսի մէջ ապուած առաջին անարդաւից պատասխանն ալ իրեն չհաղորդուելով, միամտաբար իւր վէճերովը կը զբաղէր և արքունի գործակալաց՝ Վսեմ. Վալի Փաշային և քննիչ Սիւնիֆ Էֆէնտիէն և Գաղղիոյ հիւպատոսին այցելութիւններն կ'ընդունէր, ինչ ատեն այս գին մասնաժողովը իւր գործը կը պատրաստէր. և ահա յաւելուած մի փութաց նա հանել կատարեալ յաղթութիւն մի ստանալու յուսով: Բայց վերջապէս Սրբազան Պատրիարքն Յոսպէ եղած ժամանակ, ուր երկու անգամ իջաւ քարանձինային խնդրոյն եւ ուրիշ պատճառաւ, կ'ընդունի հոն անմիջ

Ջարար Լիցիոստանն եկած երկրորդ անարգապիրը, կ'իմանայ էութիւնը, կը կանչէ զիմբապիրը և կ'իմացնէ նորա ապօրինաւ որ ընթացքը և կ'ըզ գուշացնէ Սոնի մէջ ամենեկին նոյն խնդրոյն վայրը յօդուած հրատարակելէ: Ոյն պատուէրը խիստ անողան էր, նեան աղեղէն թռած՝ իւր նպատակին հասած ու խոցը բացուած էր: Խմբապիրն արդէն իւր երեւակոյտութեանը մէջ բաւական ազդեցութիւն մի ունեցած կը կարծէր ընդդէմ վտանական կառավարութեան, որուն վրայ տահելով և իրեն տրուած պատուէրին առանգանելով օգտատուի ամացն Սոնի ալ քանի մի սողեր կ'ուզէ առ նոյն Սեծ. թագաւոր էֆէնտին: Ըտոր վրայ Արքադան Հայրը վերահասու ըլլալով մասնաժողովին իւր անձին զէմ ունեցած իշխանիւնէն գաղտնեացը, կը լռօճէ զայն և զխրմբապիրն ալ իւր պաշտօնէն կը հանէ: առնելով անոր վրայէն միանգամայն և տղարանի տեսութիւնը և սրբազրջութեան սրշտօնը, և այլն:

Բարբ սոյս խնդրոյն մէջ որ բարեմիտ և ջերմեռանդ ընթերցողը ստատախանաւորու չպիտի համարի զՍ. Արքադանութիւնը. թէպէտ և նա Սոնի երրորդ տարիէն սկսելով իւր ստատախանաւորութիւնը վերաւցած էր եւ իւր անմիջական հսկողութենէն հանած էր, ըստ որում առջի երկու տարուան պէս հրատարակելիք նիւթերը աչքէ չէր անցնէր և իւր հրաժանուելը վաւերացնէր զանոնք: Ըյսպէս ուրեմն Սեծապատիւ թագաւոր էֆէնտին եւս ստատախանաւորու համարած կ'երեւի զՍ. Արքադանութիւնը, ինչպէս յայտնի է այն երկու անարգապիր ստատախաններուն հրատարակուելուն թոյլտուութիւն չը նորհելովը, բայց մեզ քողոր է հա-

ւատալ, որ ինչպէս Ս. Ս. հաճութիւն չէ ունեցած բնաւ Սոնի մէջ հրատարակուածներուն, այնպէս եւ Լիցիոստանի մէջ հրատարակուած թերթերը եւս անոր կամայը ներհակ եղած ըլլայ. ըստ որում անոր վեհանձնութիւնը և բարձրագոյն դիրքը չներեր մեզ երբէք հաւատալ որ այդպէս անարգօրէն վրէժխնդիր լինել ուղած ըլլայ. և ոչ իսկ իւր աշխարհամտօթ յատկու թիւնները այդպիսի տկարամիտ պաշտպաններու կարօտ եղած ըլլայ: Խոսակոյ ներկայ թագաւորը, չէ թէ թագաւոր էֆէնտինն նման մասնաւոր որ արեղայէ մի անարգուած, այլ Լիցիոստան ընդհանուր հայրապետէ մի բոլոր անձամբ, անդամօք ջղօք և երակօք նշովուած ու բանադրուած ժամանակը ինչ ստատախան տուաւ անոր, ինչպէս վրէժխնդիր եղաւ. ինչ որ կը վայելէր իւր վեհանձնութեանն ու մեծահոգիութեանը. այն է լուծիւն եւ համբերութիւն, ժամանակին թողալ ամեն ինչ: Ըյս է ահա վեհանձն մարդոց վրէժխնդրութեան եղանակը: Սեծ. թագաւոր աղային կը վայելէր իրենին գաղտնատան ընել, կտակին խնդիրը թողալ բողբոմին Սեւրովայ եպիսկոպոսի և Տէր Գապարեան եղբարց ձեռքը, որ իրենց մէջ իրաւասո՛հ ըլլան, և Ս. Թոսոյս կալուածոց ամենեւին ձեռնամուխ չըլլար և տարապարտ բամբատանաց ներքեւ չթողալ իւր բարձր անունը, այս ընելով աւելի մեծ անուն պիտի ստանար աշխարհիս առջեւ:

Քանի մի խօսք եւս Ըրշտուսի պատուարժան խմբապիրն և իւր թղթթակցին ուղղելով վերջացնենք խօսքերնիս: Յիշեալ խմբապիրը որ իւր հնգետեսանօրեայ թերթին բովանդակ տարածութիւնը զոհած է սէգս-

վերի շահասիրութեան մի, պէտք էր
 իւր միտքը բերել որ սուրբ Արուսա-
 ղէ մի Աթոռը 1840 թուականէն ի վեր,
 այսինքն իւր Արշալոյսը ծնած օրէն ի
 վեր զինքը կը գգուէ իբրեւ շահութան
 որդի և տարուէ տարի հազար դահե-
 կանի կտրիկ գումար մի կը հատուցա-
 անէ ութ օրինակ լրագրի համար, ու
 բուն մէկ հատն ալ բաւական էր իրեն.
 ուստի երախտագիտական պարտքը
 չէր ներեր անոր՝ որ երկու տարիէն ի
 վեր սուրբ Աթոռս իւր նեղ վիճակին
 պատճառաւ վեց օրինակ իջեցնէ-
 լուն վրայ այս օրինակ զայրացած ըլլայ
 նորա դէմ, երբ 28 տարի շարունակ
 արդարութեամբ և անկողմնասիրու-
 թեամբ պաշտպանեց սուրբ Աթոռոյս
 իրաւունքը ինչպէս որ պարտքն էր Ա-
 շեալ լրագիրը չենք յուսար որ այսու-
 հետեւ ևս ընդունի իւր պատուաւոր
 էջերուն մէջ այդ օրինակ ձանձրացու-
 ցիչ յօդուածներ ի պաշտպանութիւն
 մեծապատիւ աղգայնոյ մի՝ որ կարօ-
 տութիւն չունի իւրեան. ապա թէ ոչ
 մենք եւս կը ստիպուինք Արշալուսոյ
 հին թերթերը խառնել և իւր արդի
 պաշտպանած անձին դէմ այն ժամա-
 նակ հրատարակած անպատիւ եւ ան-
 արդարացի յօդուածները մէջ բերել
 և զուգակշռել արդի ջատագովութեան
 հետ: Կօրելի է ըսէ մեզ թէ,
 այն ժամանակ թագաւոր էֆէնտին
 սոսկական անձ մի էր, և ոչ հիմա
 կուան պէս Ագիպոսի Պիլմարքին
 գայմախամը. որու կը պատահա-
 նեմ ըստ իւր վիրայութեանը թէ՛
 պատիւը մի և նոյն զօրութիւնն ու
 կշիռքն ունի թէ՛ մեծին և թէ՛ փոք-
 րին քով: Իսկ Արշալուսոյ թղթակցին
 գալով կ'ըսեմ թէ՛ իւր հրատարակու-
 թիւնները և պաշտպանողական յօդ-
 ւածները աւելի անարգութիւն քան
 թէ պատիւ կը բերեն թագաւոր էֆէ-

էնտին վահաննութեանը, որովհե-
 տեւ այդ օրինակ ջատագովութեան մի
 կարօտ ըլլալ կը ցուցնէ իւր առատա-
 ձեռն բարեբարը, և կերպիւ մի կը հա-
 տատէ ինչ որ կը զրուցուի նորա հա-
 մար հասարակութեան մէջ, և միան-
 գամայն կը բարձրացնէ Ն. Սրբազ-
 նութե պատիւը. ըստ որում Ասայի
 Պատրիարքը սոցրամաճիութենէ յա-
 ռաջ եկած է կ'ըսէ, որ ըսել է թէ իւր
 պաշտած Քրիստոսին արհեստն ունի
 եղեր, ըստ որում եւ Քրիստոս իւր
 մանկութեան ժամանակ հիւսն էր,
 առաքելոց շատերը ձկնորս ու երկրա-
 գործ և մաքսաւոր էին, որ մեղաւոր
 կը նշանակէր այն ժամանակ, մի թէ
 այդ անպատուութիւն է Պատրիարքի
 մի Նշ պիտի ըսէ Արշալուսոյ թղթա-
 կիցը երբ մէկն ելնէ ըսէ իրեն թէ,
 քո պաշտպանած մարդդ ալ, որ այսօր
 այդ բարձրութեան հասած է, կա-
 րելի է որ Չանաքքալէցի բրտի մը
 թոռն եղած ըլլայ. մի թէ անպատու-
 ութութիւն է իրեն, քան լիցի. այլ
 աւելի պատիւ կը բերէ նորա անձնա-
 կան ձիրքերուն և ընտիր յատկու-
 թեանցը: Այս օրինակ է ահա Արշա-
 լուսոյ իսեղծ թղթակցին զԱսայի
 Պատրիարքը անարգելու մասը կէս մի
 զրպարտական և կէս մի անոր բնական
 ձիրքերը նուաստացնող փաստերը:
 Կօրին Սրբազնութիւնը իւր աքեղա-
 ութեան ժամանակէն ստացած էր աղ-
 գայնոց շատերուն համակրութիւնը
 իւր անխոնջ ջանիցն ու նախանձելի
 վարուցը համար, և գեղարուեստից
 սիրով վառուած՝ դէպ ի Նիգլիա ու
 Վաղղիա բրած ճանապարհորդութե-
 նէն դառնալուն գրեթէ բոլոր ազգին
 մինչև անդամ թագաւոր էֆէնտին և
 իւր պաշտպանին համարումը ստացաւ
 և այս էր որ զինքը Պատրիարքական
 գերագոյն Աթոռ բարձրացուց ամ

արժանաւորութեամբ, և գրեթէ վեց տարիէն ՚ի վեր է իւր կոչմանը հաւատարիմ մնալով ընդ հանուր ազգին իւր վրայ ունեցած ակնկալութիւններն ՚ի գերեւ չհանեց, ինչպէս ականատես են տարուէ տարի այսչափ ուխտաւորները, և մինչև անգամ օտար ազգերէն գովութիւններ կ'ընդունին: Վերջ կուտամ խօսքիս՝ ներողութի իրնդրելով Ն. Սրբազնութեան, վասն զի գիտեմ անշուշտ որ այն վերջին խօսքերս հակառակ է իւր համեստութեանը եւ անխառնէր բնաւորութեանը:

ՄԵԾԱՊԱՏԻԻ ԺՈՂՈՎ

ԿԱՆԱՆՑ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՅՑ⁽¹⁾

Մ. յս հետեւեալ ճառը՝ 1865 թվականում ընթերցել է ներքին խորհրդական (Geheimrath) Պ. Վ. իդէն՝ այն 12 ուսումնական ճառերի շարքումը, որոնք 1852 թվականից հետէ կարգադրած են այստեղի Մետաքանական ժողովից՝ նոր տարւոյ և զատկի միջոցում՝ եկեղեցական նարտակներին համար: Թէ և զանազան կողմանէ էլ երկարաձգւած է և գերմաներէն բնագիրը մի փոքրիկ գրքի բովանդակութիւն է՝ «Կանանց զարգացման և կրթութեան վրայ» մակագրով:

(1) Սոյն կանխաբան տեղեկութիւնն ինչպէս բոլոր անցեալ ամսոյ ամսագրերէն մէջ ՚ի ծանօթութեան, նախորդ հրատարակելը սխալմամբ եւ թուողացած էր, զոր մեք շուղելով խօսքս զանց առնել, արժան համարելիք հրատարակել և զայն ներողութիւն խնդրելով ընթերցասեր հատարակութեան և մանաւանդ մեծարոյ և գիտնական թարգմանէն:

այնու ամենայնիւ պահած է մի հատիկ սեպհական բնաւորութիւն և սահմաններ:

Մ. յս փոքրիկ գրքի թարգմանութեան առիթը՝ հենց դ. քի օգուտներէ մէջ որոնելու է: Պ. հեղինակի հայեացքները ձգուած են ուշադրութիւններ դարձնելու դէպի զարգացման և կրթութեան ամբողջութիւնը և յարուցանում են այն հարցերը, որոնք այս սահմանին են վերաբերում և իրական գրութեանը համեմատ՝ պատասխանատուութեան ենթարկւում: Մ. յս դժուարութեամբ մի կողմ որոշելի հարցերը, որոնց պատասխանատուութիւնը ժամանակի բերմունքից և բանի հանգամանքից սպասելի է, մի որ և իցէ մտադրութեամբ մտապնդութեան չէ տրուել, այլ ընդ հակառակը շարժւել մի շրջահայտն ուշադրութեամբ՝ և ընդհանուր կարծիք և հաստատութիւն պահանջել:

Սոյց արդեօք այս ճառը նոյն յարաբերութիւնը ունի Հայերէնում, ինչպէս Գերմաներէնում, կամ ուրիշ խօսքով՝ Գերմանացոյ դրութիւնը կամ վիճակը նման է մերին: Մ. յս հարցին պատասխանելու է ոչ, եւ թարգմանութիւնը դարձեալ օգտուէտ համարելու: Անգանում տղերանց զարգացման եւ կրթութեան հոգացողութիւնը՝ դեռ շատ կարճ ժամանակից հետէ է սկիզբն առել: Հայաստանի շատ տեղերումը՝ մինչև անգամ հարկաւոր չէ համարուում ուսումը տանալը, ուսումը միայն հոգեւորականաց գործ է կարծւում: Չարգացումը՝ ամեն մարդու իրան կամ ծնողներին է մնացած, որոնք բնականաբար ժամանակաւոր հանգամանքին և դէպքերին են ենթարկւած, այս պատճառով էլ ոչ մի զարգացում չէ, որովհե-

տեւ ոչ մի նորատակ չունի, մինչև ան-
գամ տաժամանակի այ բաւականու-
թիւն էլ չըկոյ, այլ մի պատահական
կամ գիպածի համեմատ զգայական
նութիւն: Բայց էլ տղերանց համար՝
սենն և սպիտակը ճանաչելը, շատ ու-
րիշ կարգաւ և գրելը հերքում է,
այն ինչ աղջկերանց համար՝ կասկածե-
լի է շատ տեղերում եւ մեծ մասամբ
քննադատական գրութե մէջ: Այն-
գանում տղերանց վարժարանները՝ ոչ
թէ միայն պակաս են շատ տեղերում,
այլ և եղանակները՝ զուրկ մի միտքանա-
կան կարգից և կանոնից: Նոստրեր
ուսանում են աչքի տակ ընկած ա-
ռարկայները՝ առանց ուշադրութիւն
ունենալու ծանրալիզութեան և ա-
շակերտների բնութեան և կարողու-
թեան վրայ: Այսպիսի վարժարաննե-
րը չունին մի որ և իցէ կապմած, այլ
ժողովում այս կամ այն ուսումնական
կառուցածների (Lehraustalten) հաւ-
ուկոտրեցից: Արտում է աշակեր-
տը՝ չգիտի ինչ ճանապարհ բռնի, ո-
րովհետեւ շատ անգամ էլ վարժարան
գնալիս ուրիշ մի յայտնի նորատակ չը-
կոյ աչքի առաջի, այլ թէ տանը չու-
րութիւն չըլինի, որպէս թէ՛ վարժա-
րանն է շարութիւն անելու տեղը:

Այն կողմանէ անուրանալի է այն
բացառութիւնը, որանքանում են մի-
քանի վարժարաններ, օրինակի հա-
մար, Ռուսաստանում տէրութեան
գիւմնազիւ միւսրի օրինակով վարժա-
րանները: Այսպիսի վարժարանները տե-
րութեան նորատակներն են առաջ տա-
նում, ինչպէս գիւմնազիւ միւսրը, ուս-
տի և նրանց հետ են համագտակել:

Բայց Վերմանիայում տղերանց
վարժարանները հնուց են և կարգին,
առաջացած պակասութիւնները օր-
ըտ օրէ լլուում են շրջահայուն տե-
սակների մեծ հոգատարութեամբ և

բաւականաչափ վարժապետների ան-
խանջ աշխատութեամբ: Բաւական է
գիտենալ թէ՛ երեսայն որ տեսակ
վարժարանն է գնում, իսկայն կ'իմաց-
ւի թէ՛ ինչ ուղղութիւն է բռնելու
նա վերջը, եթէ ուսումը անարդէք
շարունակելու լինի: Արտիկան այնտեղ
վարժարանը ունի իրա ուղղութիւնը
եւ իրա աշակերտներին նրանով ա-
ռաջ է մղում: Այնտեղ չէ՛ կարողա-
նում մի տեսակ վարժարանին բաւա-
կանութիւն տալ, կարելի է նրանից
հանել եւ միւսը ուղարկել, մինչ որ
նրա ընդունակութեան յարմար գոր-
ծունէութիւն կը շարժի նրանում
և այնուհետեւ ինքնին առաջ կ'եր-
թայ: Տղերանց վարժարանների առ-
հասարակ կարգադրութիւնների օրի-
նակին ձգտում են աղջկերանց վար-
ժարաններն էլ, աչքի առաջ ունենա-
լով նրանց յաջող յառաջագիմութիւ-
նները: Հմուտ մանկավարժները զննե-
լով և ճանաչելով կանանց յատկութիւնը
բնութիւնը, աշխատում են որոշե-
լու եւ պարզարանելու աղջկերանց
վարժարանների վրայ գաղափարը, ո-
րով և զանազանութիւնը՝ տղերանց
վարժարաններէլ: Այն խօսքով, այս
տեղ բանը սկսած է և առաջ է գը-
նում, միայն ժամանակ տա ժամանակ
կարծառում է զգուշութեան, որ չըլինի
թէ՛ յանկարծ խտորնակ ուղղութիւն
ստացւի:

Աղջկերանց վարժարան յանի աւարինե-
րից առաջ մեղանում լուած բան չէր:
Բայց առաջ այ հանգամանքները փո-
փոխեցան և նոր ժամանակը մեր-
ձեցաւ, ուր մեղանում էլ աղջկերանց
վարժարանի հարկաւորութիւնը ըզ-
գալի եղաւ: Այս հարկաւորութիւ-
նը ինչպէս զգայեցաւ, նոյնպէս
և առաջ լլուեցաւ և մինչ օրս էլ շատ
անգամ լլուում է դանի Ռուսաստա-

նում ոչ ազգային կամ ժողովրդային ազդիւրանց վարժարաններով : Այս տեղ միւրիշ միտք կամ նպատակ չը կայ, այլ միայն ժամանակի բերմունքին և հանգամանքին բաւականութիւն տալ որ շատ անգամ էլ անյաջող է՝ վարժարանների կողմից անհագացողուն նպատաւով : Սրանցից յետոյ կամ հէնց սրանց հետ միասին բացւեցան աստ եւ անդ ազդիւրանց ազգային վարժարաններ մասնաւոր ձեռնարկութեամբ : Սրանց ձեռնարկողները շատ անգամ չունենալով ոչ մի կոչում այս մասին, և իսկապէս իրանք էլ զուրկ լինելով մանկավարժական մինչ անգամ ամենափոքր ուսումնից՝ սկսեցին մէջ ընկնիլ, որպէս թէ գործ առաջ տանին : Աւ սրանցից ով ինչ առնուն ուղից, աւաւ ազդիւրանց ուսանելու տան, առանց նրա ամբողջ կադմուաճքը ցուցանելու և յարմար անւանակուելու և սահմանափակելու : Սրանց ոչ ձեւն է յայտնի և ոչ կանոնը, որ մարդ էլ կարողանայ տեսնել թէ՛ ինչն է պահաս, կամ ինչն է առժամանակ ամենից շատ հարկաւորը : Ասածներս էլ հիմնւած են միմիայն մասնաւոր նկատողութեան վրայ և ոչ թէ հաստատուած չըջաբերական յայտարարութիւնների, ինչպէս վուել է. ուստի չը պիտի այստեղ աւելի առաջ գնալ՝ ուղիղ ճանապարհից չը մտրուելու համար :

Ինչպէս էլ որ լինի, այնու ամենայնիւ նոր ժամանակներս մեզանում շատ անգամ խօսակցութեան նիւթ է դառել դաստիարակութիւնը, և շատ անգամ էլ հրապարակ եկել՝ առանց հետը բերելու մի ձեւ կամ եղանակ թէ՛ տղերանց և թէ՛ աղջկերանց վարժարանների համար : Այսպիսի խօսակցութիւնները, ոչ ինչ կարծիք, ոչ ինչ կորագործութիւն չեն յայտնել :

այլ միայն դաստիարակութեան հարկաւորութիւնը՝ անորոշ կերպով շատ ու քիչ դարձեալ դպայնելու են աշխատել :

Հայոց իւրաքանչիւր տեղում մի հանաւոր միաբանական կարգադրութիւն թէ՛ տղերանց և թէ՛ աղջկերանց վարժարանի համար զանազան կողմանէ նըկատելով մի իրողականութիւն է՝ հասարակութեան դիմադարձ բաղաւորութեանը և ձեռնարկութեանը կարօտ : Եթէ օտարների վարժարաններն էլ օրինակ լինին այս դէպքում, այնու ամենայնիւ պիտի միշտ սեպհականութիւնը և իրական զանազանութիւնը պարզաբանել և պինդ պահել, բոլոր յարաբերութիւնները որոշել և ապա շարժում տալ առաջ ելութեւ : Այսպէսով կարող է մի վարժարան լինել ազգային և մարդու զարգացումը դէպի ազգայնութիւն և կրօնը :

Հետեւեալ ճառը մի որ և իցէ կողմանէ վիրէ առնում մանկութեան հասակի զարգացման ամեն յարաբերութիւնների հարցերը, ինչպէս օրինակի համար, յարաբերութիւնը դէպի ընտանիքը, հասարակութիւնը, կրօնը, և այլն, և այս յարաբերութիւնները անպատճառ աչքի առաջ առնելու է՝ զարգացում և կրթութիւն տալու ժամանակ : Այս է այս թարգմանուն անմիջապէս նպատակը : Իայց թէ բանի հանգամանքին նայելով սրանցից իւրաքանչիւրի վրայ ինչպէս մտածելու է և ինչպէս սեպհականապէս որոշելու, և այլն, այդ ընդհանրապէս հասարակութեան և մասնաւորապէս զարգացնողների և կրթիչների գործն է, որոնց ուշադրութիւնը այժմ այս ճառի վրայ հրաւիրելու համարձակութիւնը՝ վերջիշեալ նպատակով յանձն առում եմ :

Միւսա Մկրտչեան :

Կ Ա Տ Ո Ն Ի

ՅԱՂ. ՈՒՍՄԱՆ ԲԱՐԻՈՔ

ԿԵՆՅԱՂԱՎԱՐԵԼՈՅ

(Հարունակութիւն, տես թիւ 9.)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Որի գործը Լսողաճութիւն,
Որպէս ասեմ գրող պատմութիւն.
Հոգւով պարտէ պաշտելութիւն,
Սպասուր մտք վերյարգութիւն.
Հսկեա, մի տար միշտ քուն աչաց,
Լը մի հանգիստ ժամուց բաղմաց.
Քանզի առիթ է չարութեանց,
Սորորութեանց և յոռութեանց.
Վարկեա դու մայր և գլուխ բարեաց,
Սանձահարեւն զձայր լեզուաց.
Քանզի ըզնա Լսողաճ սիրեաց,
Որ լռութեան միշտ հետեւեաց.
Ներհակ դու քեզ մի լինիցիս,
Կամ հակառակ գտանիցիս.
Թէ մի անգամ քեզ ներհակիս,
Դու ոչ երբէք համաձայնիս.
Թէ հայելով ի կեանս մարգկան,
Ոչ գտեր զք օրինական,
Սիբամահեր զնիւթական,
Օհ չիք բնաւ անպարտական.
Լիթե ունիս ինչ սիրելի,
Որ և իցէ քեզ մնասելի,
Նմա է միշտ նախադրելի,
Որ է օգուտ ամանակի.
Հաստատ կամ հեղ լիջիր միայն,
Ժամանակին ըստ պահանջման.
Քանզի գիտնոյ չիք հեշտական,
Քան զգարս փոխել կենցաղական.
Սի զուր գիցես ունկլն կանանց,
Ի զճառայիցդ գանգատողաց.
Օհ զոր բաղմիցս այրն սիրեաց,
Օայրն բաղմիցս կին իւր ատեաց.
Յորժամ զք աստ կամիս ուղղել,
Լը նա չկամի ձայնիդ լեւ,

Թէ ըսկար սրտիւ սիրել,
Սի դադարիր միշտ ազգ առնել.
Ի աղմակսօսից դէմ յանդիման,
Սի ամրոյի լիցի նման.
Օբարբառ ունին ամենեքեան,
Օխմաստութիւն սակաւք միայն.
Սիշտ ցոյց այլոց սիրոյ նշան,
Քաղցրագունից իցես նման.
Իարի լեր միշտ բարեաց մարդկան,
Տես մնաս չառնէ ամբարտախն այն.
Խռովակսօսից կացես ի բաց,
Սի տար պտաճառ բանիւք լեզուաց.
Քանզի լուել չուճէք մնասեաց,
Լը մնաս եղեւ խօսիլ բաղմաց.
Լըք քեզ իր ինչ է խօսեցեալ,
Սի կարծեր միշտ ստոյգ եղեալ.
Հաւատարիմ սակաւ գտեալ,
Ի աղուճք բաղմաց է ասացեալ.
Յորժամ գայ քեզ փառք յօտարաց,
Լեր դատաւոր քոյոց արդեանց.
Լը առաւել քան քո մտաց,
Սի հաւատար փառս տուողաց.
Դու գայոց բարերարաց,
Լըրկար բանիւք պատմեա բաղմաց.
Լըք դու առնես զգարիս նմանեաց,
Սի ինչ յայտներ ընկերակցոց.
Ի ծերանալդ պարտ է յիշել,
Օխօսս և գործս այլոց գիտել.
Օմանկութիւնդ ի միտ բերել,
Ի քոյ յօգուտ օրինակել.
Լըք դու զանձդ յաջող գլխար,
Օանյաջողիդ մի մոռանար.
Նախնեաց յեսինք միշտ անդադար,
Ոչ ցուցանեն զնոյն կամար.
Քանզի երկբայ և անցաւոր,
Սեղ է տուեալ կեանս կարեւոր.
Ի մահն այլոց օրինաւոր,
Սի յոյս դիցես յօժարաւոր.
Թէ բարեկամ քեզ ինչ տացէ,
Յօժար սրտիւ ընծայեսցէ,
Օչնորհն զայն վերբնկալցիս,
Լը մի բնաւ զայն մոռացիս.
Քանզի մանուկ աղքատ ծընար,

Ե յայդէս յաշխօրհն երեւեցար,
 Յաղթատու թեան բեռինս տարար,
 Համբերելոյ լեր միշտ յօժար:
 Յօրէ վերջնոյն քոյոյ կենաց,
 Սի երկնէիր ՚ի մէջ մրտաց,
 Որ մեռանիլ երբէք վախեաց,
 Սընաց թափուր յանտի կենաց:
 Թէ ոչ առնեն բոտ արժանեաց,
 Քոյդ բարեկամք քոյոյ բարեաց,
 Սի բամբաստեր՝ այլ ՚ի Տէր հայեաց,
 Եւ ժուժկալ լեր և համբերեաց:
 Օգր ինչ ունիս՝ ՚ի կիր արկցես,
 Ըմէն իրօք դու լի իցես,
 Եւ թէ լինի որ սրհնեցես,
 Օգր կասկիւն և գիտացես:
 Յորժամ առնել զիր ինչ կարես,
 Օայն դու յայլում մի խտտեցես,
 Ընմիա լինել զքեզ մի ցուցցես,
 Թէ երեւիլ մարդ կամեցես:
 Եթէ իցէ քեզ սիրական,
 Որ կեղծաւոր և ստաբան,
 Կեղծեա և դու նրմին նման,
 Օ ի արհեստիւք արհեստք զընան,
 Սի դար գովեր յաճախանօք,
 Ընոյշ և քաղցր բարբառօք,
 Օ ի մարդն անոյշ և քաղցր երգօք,
 Թոչունս խաբեն որոգայթիւք:
 Թէ իցէ քեզ ստացեալ որդիս,
 Ըլ տալ նոցա ինչս ոչ ունիս,
 Ըստ նոցա՝ զարհեստ տառաջիք,
 Օ ի կերակրիլ միշտ կարաջիք:
 Ը վատ երբեմն քեզ սիրելի,
 Երբեմն աղնիւն է խտտելի,
 Ըգրանք չէ քեզ միշտ բաղձալի,
 Ըդահումեան չէ հետեւելի:
 Օգր առացեր քամահելի,
 Ը իցի ՚ի քէն յոյժ խտտելի,
 Օ ի վարդապետ նախատելի,
 Ը որ առնէ նախատելի:
 Հայցես զիր ինչ արդարութեամբ,
 Որ լի իցէ համեստութեամբ,
 Օ ի մի լուիցես բացատութեամբ,
 Երբ հայցեցես անմոտութեամբ:

Թէ ինչ է քեզ անձանտմամբ,
 Սի պարծենար անմոտութեամբ,
 Օ ի իրն յայտնի իմաստութեամբ,
 Ընոյտ լինի անմոտութեամբ:
 Վանդի մեր կեանք իսկ գտանի,
 Ը մէջ երկրոյ եդեալ վառնի,
 Օգր մի թողուր որ անցանի,
 Յորում վատապէ և շահ չըլնի:
 Դու որ զընկերդ յաղթել կարես,
 Սի նեղեցես՝ պարապ թողցես,
 Օ ի սիրական հաստատ գրացես,
 Որոյ յաւէտ բարի ապցես:
 Երբ դու հայցես զմեծագոյն,
 Սի յապաղեր տալ փորրագոյն,
 Օ ի այն կերպիւ սիրեւագոյն,
 Ըղիցի քեզ մերձակագոյն:
 Սի բնդ ումեք դու վիճեցես,
 Օ ի մի շնորհաց թափուր ելցես,
 Սի ատեցողս անձին գացես,
 Ըլ զմոտ թիւն սիրով տեսցես:
 Թէ բարկանաս դէմ ծառայից,
 Գողով նոցա յանխմատից,
 Օ անձնդ ՚ի մէջ գիր համբերից,
 Օ ի ներեցես ողորմակից:
 Թէ գող կարես յաղթողագոյն,
 Ը եր համբերող ներողագոյն,
 Ը մէջ բարեաց է մեծագոյն,
 Համբերութիւնն է ծանրագոյն:
 Օ ինչ վատախօք դու շահեցար,
 Պահես զնա խնայաբար,
 Ըրբ զէն լիցի պատահաբար,
 Ըրատապցիս կարօտաբար:
 Յուէտ այլոց մի հրաւիրող,
 Սակոյն երբեմն լիցի կօշող,
 Ըթէ իցես յոյժ յաջող,
 Ը եր քոյդ անձին միշտ խնամող:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ըթէ կամիս դու ճանաչել,
 Թէ զինչ իցէ երկրագործել,
 Օ ի իրդիլիս ՚ի ձեռդ առնուլ,
 Ը քեզ լմբան և ընթեռնուլ:

Եթէ բուսոցն զօրութիւնս,
Եւ եւս տնկոցն զօգտութիւնս,
Եւ իմանալ քեզ ցանկութիւն,
Տես Սակերի զպատմութիւն:

Թէ զպատերազմ Հռոմայ մեծին,
Օքաղաքական վեճքս նոցին,
Գիտել կամիս ՚ի միասին,
Ղուէանսի (1) ցանկա գրքին:

Թէ կամ է քեզ յաւէտ սիրել,
Կամ շտրոյ կապ ցուցանել,
Իցես պատրաստ ՚ի ձեռս ունել,
Օ՛նասովնի (2) գրեանն սրահել:

Իսկ թէ հոգաս իմաստութեամբ,
Ընդուցանել կեանս բարութեամբ,
Իւր ինձ ուրեմն ժողովութեամբ,
Ուսիր գնալ միշտ ուղղութեամբ:

Ընծանօթից իսկ թէ կարես,
Յաւէտ նոցա զահ ցուցցես.
Օքարեկամս ստանայցես,
Եւ արքայի նմանիցես:

Թող զխորհուրդ աստուածային,
Եւ զինչ իցէ տունն երկնային.
Քեզ մի իցէ որոնելին,
Եւ լեր հասու անցաւորին:

Չգեսա ՚ի քէն զերկիւզ մահու,
Սի յամենայն տրոմիր ժամու.
Օ ի է յիմարութեան չափու,
Թողուլ զերկրանս այս կենցաղու:

Ըմենեւին մի բարկացես,
Եւ մի զիրաց ինչ վիճեացես.
Օ ի բարկութեամբ ոչ կարացես,
Նա եւ զուղիղն ոչ իմացես:

Ի ծախս անձինդ դու խնայես,
Սակաւապետ լինել փութա.
Օ ի անսպթաք նաւն ու զղի,
Ուր փօրը հողմով տարեալ լինի:

Օ որ ինչ յամօթ քեզ համարիս,
Սի տար պղծն ՚ի լեկիս.
Օ ի մի յաւէտ մեղադրեացիս,
Եւ միշտ յայլոցն անպոսնեացիս:

Օ մեղս մարդկան մի գիտացես,
Հետաքրքիր մի դու իցես.

Օ ի զոր այժմիկ անձանայես,
Հայրւմ ժամու տեղեկացես:

Օ մարմնոյ ու մեք տկարութիւն,
Սի անարգեր զուժեղութիւն,
Քանզի ունի զիմաստութիւն,
Եւն ում երբեմն չիք զօրութիւն:

Թէ որ քան զքեզ տկարացոյն,
Սի հետեւ իր յոյժ մօտագոյն.
Օ ի պատահի յաղթեցելոյն,
Հաղթել երբեմն հօրագոյն:

Սի վիճեացես զանձանօթից,
Պէտքես բանիւք եւ զանյայտից.
Օ ի վէժ փոքրիկ եւ սիւրճակից,
Հետոյ բերէ զբաղում կսկիծ:

Օ ինչ է խորհուրդ աստուածային,
Սի որոներ զմայրդ հողային.
Օ ի որ տահման առանց քոյին,
Հանցէ Կտուած դատաստանին:

Տանա զնախանձն հեռի առնել,
Խոնարհութեամբ քոյով արգել.
Չիցէ կարող որ քեզ վնասել,
Կամ զքեզ երբէք տրտում առնել:

Սրաի մտք լեր հաստատեալ,
Երբ անիրու դատապարտեալ.
Օ ի է յաւէտ նա երանեալ,
Թիւր դատողէն վճիռ կրեալ:

Օ ի արժանի գովտանաց,
Սի զքեզ առնէր սրտաւանաց.
Եւս գու յատուկ յիմար արանց,
Որք են միշտ տունն ունայնութեանց:

Յորժամ ծախքդ ըս զմտադառիկ,
Օտխես զինչդ տակաւակի.
Օ որ ստացար ժամու բողմի,
Սի կորուսցես ժամու կարծի:

Եւ յիմարաց երբեմն նման,
Ժամանակին ըստ սրահանման.
Ունիլ զկերպ յիմարութեան,
Եւ օրինակ խոհեմութեան:

Ի բաց հերքեա զչար ցանկութիւն,
Եւ եւ յաւէտ զագահութիւն.
Քանզի սօքա զվատութիւն,
Սիշտ ծնանին եւ զչար անուն:

(1) Աննէա Լուկանոս լատին ճարտարաբան:

(2) Այն է Ովիլիոս բանաստեղծ:

Սի հաւատար բաղմախօսաց .
Նոր ինչ յաւէտ և սրտմողաց .
Օ ի փոքր հաւատ բաղմասողաց ,
Ետուն խոհեմք միշտ այնպիսեաց :

Երբ դու արբեր գինի նուազ ,
Երբ դու յաւէտ քեզ դատախազ .
Քանզի գինւոյն չէ ինչ մնաս ,
Եւ ըմպողին է միշտ մառազ :

Պաղտնի խորհուրդ քոյոյ սրտի ,
Ղիբ ի սիրան բարեկամի .
Եւ զողջութիւն մարմնոյդ բժըշկի ,
Ղիբ ի ձեռս հաւատար մի :

Օ ձախորդութիւն պատահաբար ,
Սի կրեցես դու տրտմաբար .
Բաղդին է չար նետ գաղտաբար ,
Օ ի հարկանէ ու ժեղաբար :

Պու զապառնիս յառաջ գիցես ,
Եւ զգուշութեամբ միշտ քննեցես .
Քանզի սակաւ մնաս կրեցես ,
Երբ զհանգերձեալս դու շակեցես :

Ենյաջողմանց ի մէջ բաղմաց ,
Սի կորուսցես զգոյն երեսաց .
Պահեա զոյսն ի մէջ մըտաց ,
Օ ի ժամ մահու է ի կարեաց :

Օ ինչ է բարին ծանօթ գողով ,
Սի ընկեացի աւուրբ միով .
Օ ի դէպ ժամուն ճակատն հերով ,
Բայց հերթափ բնաւ յետնով :

Օ ինչ հետեւի զայն հագասցես ,
Եւ զգալոցն յառաջ տեսցես .
Եւ զյետինն նախ միշտ քննեցես ,
Եպա խոհեմ զանձնդ արացես :


Օ ի դու իցես ի զօրութեան ,
Երբեմն զքեզ տուր ճշդութան .
Սակաւ է պարտ տալ ինդութեան ,
Բաղում յաւէտ յառողջութեան :

Սի ցրեր բաղմաց զդատաստան ,
Չհաւանիս քոյին միայն ,
Ենարգողացն որ է նրման ,
Սա չէ երբէք հաճոյական :

Քոյ մանաւանդ հոգածութիւն ,
Ե իցի յաւէտ ի փրկութիւն .
Սամանակին չիք մեղադրանք ,

Երբ դու քեզ տաս մեծ տառապանք :
Հոգ մի լիցի ի յերազոց ,
Օ ի միտք հակէ յանկացելոց .
Օ ինչ յոյս իցէ հասկացելոց ,
Են գող փափաք նիրհեցելոց :

(Երբեմն ինչ է)




ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐԴԻԻՆՔ

Ղիտեմք ի փորձոյ թէ՛ որ և իցէ
աշխատութիւն մի աւելի կը քաջալե-
րուի երբ ի տես հասարակութեան
դրուելու լինի այն : Եւ որովհետեւ
բնական է մարդոյս անձնասիրութիւ-
նը և գովութիւն լսելու սէրը , մա-
նաւանդ երբ տղայ հասակի մէջ է ,
ուստի երբ կը տեսնէ որ իւր վաս-
տակները հասարակութեան զիմաց
կը դրուին , թէ և կարեւորութիւն մի
տրուելու չըլլայ անոնց , և ոչ ուշադ-
րութեան արժանի համարուին , այ-
սու ամենայնիւ համբալ մի միշտ այն
հրատարակութեան մէջ իրեն անձ-
նասիրութիւնը շողքորթող և զինքը
գովաբանող լեզուներ երեւակայելով
կը գրգռուի և դիւրի յառաջ երթա-
լու մղում մի կ'ունենայ : Եւս դի-
տաւորութեամբ է որ յանձն առինք
Սիօնի մէջ հրատարակել սուրբ Եթու-
սոյս Վարդի գրաւոր աշխատութիւն-
ները , թէ՛ հեղինակութիւն և թէ՛
թարգմանութիւն , ինդրելով կան-
խաւ բանասէր ընթերցողներէն՝ որ
իրենց ներողամտութեամբը ընդու-
նին՝ թէ և ուշադրութեան արժանի
նիւթ մի չգտնեն անոնց մէջ : Քա-
ջալերութիւնը մեծ դաս մի է աղգաց
յառաջադիմութեանը :

Հետագայ առաջին յօդուածը գը-
րողը Եղիշուտի աղգայիններէն մե-

ծաղկաբույսն և բարեպաշտոնն Պօղոս է-
ֆէնտի Արարապետեանի որդեգիրն է,
ազգաւ Աթոլպաշի, որ թէպէտ և
շատ տարի չէ դպրոցն ընդունուիլը,
սակացն խիստ մեծ յոյսեր կուտայ
ուսմանց մ. ջ զարգանալու, և որդէն
համեստ և հեզ բնաւորութեամբը
սիրելի եղած է իւր դաստիարակաց-
անշուշտ օր մի մեծ պատիւ պիտի
ընէ նաեւ իւր Արարապետի հայրա-
դրին, որ իւր զարգացմանը համար
ամենեւին բան մի չնայեր:

Պարոք կը համարիմ՝ արդէն ծա-
նոցանելու՝ որ սոյն հեղինակութիւն
ները սրբազրուած չեն իրենց դա-
սատուններէն, բայց ՚ի բանի մի աննշ-
շան տառասխալներէ:



ԽՈՅՈՒՄՆ ՄԱՀՈՒ

«Չիք ստոյգ բան զմահ, և չիք
անստոյգ բան զօր և զժամանակ մա-
հուն, որում այր խոհեմ ոչ է ան-
ծանօթ, զի քաջ գիտէ՝ թէ ամենայն
վայրկեան է ժամանակ մահու իւրոյն:


Այլ՝ որ զմոռւածէ յամենայն
ժամ թէ զինչ էր, զինչ եղեւ, եւ
զինչ լինելոց է, ոչ երբէք մեղանչէ,
ըստ բանի իմաստնայն թէ՝ «Յիշեալ
զվախճանքս, և ոչ մեղիցես յաւի-
տեանն». կամ՝ «Յիշեալ զօր մահու
և զդատաստանինն»: Բանզի զինչ է
մարդ, և զինչ կեանք նորա ՚ի մէջ
անցաւոր և վշտալից աշխարհիս աշ-
տորիկ, ոչ ապարէն հող եմք մեք և
մոխիր, և կեանք մեր անցանէ իբրեւ
զհետս ամպոց, և թառամի վաղիւ-
ղակի որպէս ծաղիկ վայրի, զոր տե-
սեալ հոգւոյ ակամբ Աստուածահայր
մարգարէն Պաւլոս, ազաղակէր ա-

սելով: «Արպէս ծաղիկ վայրի այնպէս
ծաղիկի, չնչէ ՚ի նմա հողմ, և ոչ է,
և ոչ եւս երեւի տեղն նորա»: Իսկ
արդ՝ եթէ սկիզբն մեր ՚ի հողայ է, և
կեանքն մեր վաղաթառամ և լի զա-
նազան վշտօր, և մահ մեր տորածամ
և ելք մեր չարաչար, սպա ուրեմն
զիսորդ ոչ խոհայցեմք զօր մահուն և
զդատաստանին, և զիսորդ ապակա-
նելի և չարաշուք մարմնոյս և եթ
կոյցեմք ՚ի ծառայութեան, ոչ ապա-
քէն բնութիւնն իսկ կշտամբեալ
յանդիմանէ գմեղ, եթէ ստեղծաք
մերկ, եւ եթէ ՚ի դրախտին եղաք
մերկ, և եթէ ՚ի դրախտէն արտաքս
եկաք մերկ, և եթէ անդրէն յերկիր
մերկանդամ երթալոց եմք, որպէս ա-
սէ մեղուարանն մեր սուրբն Ադի-
շէ: Ապա ո՞վ հետեւողք Քրիստոսի,
մի մարմնոյ տկար և ազօտ ակամբ հայե-
ցեալ զերեւելիս և եթ նկատեսցուք,
որպէս առնեն հեթանոսք, այլ հո-
գւոյ ակամբ հայեցեալ տեսցուք զի-
մանախն, և զհետ յիցուք փութով
անանց կենացն, որ արդարոց՝ այսինքն
զանցաւոր զխորուսիկ պատրանս աշ-
խարհիս արհամարհողաց միայն է
պատրաստեալ: Բանզի նորա ոչ պառ-
բեցան ՚ի վաղանցուկ և յառժամեայ
զուարճանայ կենցաղոյս, այլ գիտա-
ցեալ եթէ ինքեանք ոչ են յաշխարհէ
տառի, որպէս ասաց Տէրն թէ՝ «Առ-
պէս ես չեմ յաշխարհէս, նոյնպէս և
նորա չեն յաշխարհէս», այլ օտար և
սրանդուխտք են յանցաւոր երկրիս,
ուստի արհամարհեցին զկարիս կեն-
ցաղոյս, և հողւոյ ակամբ հայեցեալ
տեսին զանանց և զառանց վշտաց եր-
կիրն՝ ուր կան և թաղաւորեն միշտ
ճշմարտութիւն, սէր և միութիւն:
Արհամարհեցին եւ զկենցաղս զայն
ուր կան և թաղաւորեն խեռ, ատե-
լու թիւն և նախանձ, և թողեալ զամ՝

զհետ եղեն իմանալոյն : Վանդի քաջ
գիտացին՝ զի եթէ զկենցաղս սիրէին,
ոչ կարէին սիրել և զհանգերձեալն,
և զհայր հանդերձելոյն . քանզի քաջ
ի միտ առին զասացեալն ՚ի Տեառնէ
եթէ՝ « Եւ կարէք երկուց տերանց
ծառայել, Ետուծոյ և մամոնայի » :
Եւ քա և միք ծանկցուք զկոչումս սուրբ
յոր կոչեղաց ՚ի Տեառնէ, և թողեալ
զստիս՝ զհետ լիցուք հանդերձելոյն,
և խոկացուք հանասլաղ զօր մահուն
և զգատաստանին, զի մի՛ եկեալ Տէրն
յանկարծակի գտանիցէ զմեզ ՚ի քուն,
ընդ մէջ հատանիցէ, և զբաժինս մեր
ընդ անհաւատս դիցէ . զի ինքն ասաց
ամենայն հաւատացելոյ թէ՝ « Եւ
թուս կացէք զի ոչ գիտէք զժամ և
զժամանակ, թէ երբ գայցէ Որդի
մարդոյ » . և թէ՝ « Եւրանի ծառայիցն
այնոցիկ՝ զորս եկեալ Տէրն գտանիցէ
արթունս և սրտաբառս . ամէն ամէն
ասեմ՝ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ
և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ
պաշտեցէ զնոսա » :

ՎԵՐԷԼ

Պօղոս Կարապետեանց :



« Եւ քա և մարդոյ բնաւ չծնանիլ,
քան կեալ յանցաւորութեամբ » :


ՀՈՄԵՐՈՍ

Եւ նայն գոյութիւն որք ընդ տիւ
եղերս՝ բանականի և զգայականի բե-
րեն յանձինս զյաակութիւն, որք ըս-
տեղծեալ են ՚ի փառս Ետուծոյ, զի
Ետուած փառաւորի և փառաւո-
րեալ է միայն յարարածս իւր : Որպէս
ամենայն գոյութիւնք, նոյնպէս և
մարդն՝ ՚ի մէջ ամենայն արարածոց
գերագոյն հանգիստանայ գեղապանծ
վայելքութեամբ և իմացական ձրիւքն,

պարտի զամենայն զգուշութիւն յան-
ձին ունել ոչ անցանել զպատուիրա-
նաւն և զօրինօք զորս եդ արարիչն
բնութեան, և փառաւորել զՏէր ՚ի
գործս բարիս որոյ վասն և ծնեալ խկ
է . ահա զայս պարտաւորութիւն
նոյն ինքն բանականութիւնն դնէ ՚ի
վերայ նորա : Եւ թէ չգիտիցէ նա զվախ-
ճանական նպատակն որ վասն ծը-
նեալ է, ոչ գործէ զարժանին բնու-
թեան իւրոյ, այլ թերադուր բնու-
թեան և եթ հետեւի և ծառայէ նմա,
և հեռացել հեռանայ յիսկական յատ-
կութենէ մարդկութեան և ՚ի վախ-
ճանէն իւրմէ և յանցաւոր գտանի,
աստ ահա ՚ի յանգ ելանէ բարոյա-
կանն Հոմերի թէ՝ « Եւ է մարդոյ բը-
նաւ խկ չծնանել, քան կեալ յանցա-
ւորութեամբ » : Օ ի մարդ յանցուց-
եալ ոչ միայն անձին բերէ զազէտս ան-
թիւս, այլ և զայլս անկարգ վարու-
քին դայթակղեցուցանէ և լինի ա-
ռիթ կորստեան նմանոյն . և կամ
եթէ չար ինչ արարեալ է, երկուցեալ
ի կորստենէ պատուոյն՝ ջանայ արստա-
ւորել և զայլս վայրապար, որով լինի
և մարդասպան : Հարցցուք ուրեմն,
եթէ ոք անձինն անարժան և յան-
ցաւոր գնացիւք և զայլս գայթակ-
ղեցուցանէ, քանի՞ կրկնապատիկ պատ-
ժոյ չիցէ արժանի . այն, եւ ես ա-
սեմ՝ ըստ Հոմերի թէ, Եւ է այն
պիւտոյն չծնանել, քան ծնանելով
անչքացուցանել զփառս բնութեան
իւրոյ . ահա վասն այսպիսեաց ասէ
Վրիստոս . « Եւ էր նմա եթէ չէր խկ
ծնեալ » : Եւ Ետուած ինքնին ստրջա-
ցաւ վասն ստեղծանելոյն զմարդ . ուն-
տի զայնոցիկ որք առ Նոյնն՝ ասէ .
« մի մնացէ հօգի իմ ՚ի մարդիկդ այդ՝
վասն լինելոյ դոցս մարմին » : Վանդի
մարմնով միայն էին և չիջեալ էր լոյսբա
նականութեաւ առ նոսա, և մեռեալ հոգ-

և ունեւորոյ և զամենեւեան ջրհեղեղաւ կորոյս, զի յայտարեաց աստի հեռի է բարւոյ անկալութիւն. իբր ըզնչաւոր գիտակ մեռելատիւ ջրջին յաշխարհի ի մնաւ մարդ կուէ. իշւ վտան զի զամենայն մնաստարս պարտիմք իբաց մերժել ի մենջ, ապա զայս օրինակ գայթակղեցուցիւ և թէ երբեք գտանիցին առ մեզ, ի բայ հեռացուցուք ըստ բանին Վրխառսի թէ « Եթէ՛ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հաս զնա և ընկեա ի քեհո, որով և զծաղիկ հասակ պատանեկութեան մերոյ պահեմք անթառամելի իբր ի խորշակաբեր հոգմաց :

Ներքին Պաշտաստիւն
Անթիքի :



Ա. Ռ. Ա. Կ

Դեղեցիկ կաղնի :

Հովիւ մը իւր որդւոյն հետ կաղնիի մը չաքին տակ նստած ժամանակ երեք օտարական մարդիկ հանգիսեցան հոն, որոնց հագած կարմիր և երկնագոյն հանգերձր, գլխունն դրած աղջու մորե է գլխարկը եւ հրացայտ գէնքերնին զինուորական կարգէ ըլլալ կը ցուցնէին զիրենք :

Կանգնեցան ասոնք կաղնիի քով աւոր գեղեցիկ թիւնը դիտելու, որուն վրայ հիանալով անոնցմէ մէկը ըսաւ. « Ի՞նչ պատուական ծառ է, եթէ ասոր փայտովը ածուխ շինուի մեծ շահ կը նայ բերել » : Հովիւը պատասխան տուաւ այս խօսքերուն ըսելով. « Ի՞նչ խաղործ այդ ըսածդ կարելի է » :

Յետոյ երկրորդը դարձաւ ըսաւ. « Ի՞նչ է հնար ըլլար ասոր կեղեւը առնել, կաշի աղելու համար տաշտ մի շինել կուտայի որ ամբողջ տարի մի կ'երթար ինձ » : Հովիւը դարձեալ ըսաւ. « Ի՞նչ ճշմարիտ է, խաղախորդ,

բայց ախտս չէ՞ տղաքէս գեղեցիկ կաղնիի կարելու » : Երջուպէս երրորդը սկըտաւ խօսիլ ու ըսաւ. « Ի՞նչ է, ի՞նչ ալ շատ կաղնի բեռցած է, ուր էր որ ասոնցմով իմ խոզերս պարարտացնէի, և աղնիւ երշիկներ շինէի ծախելու համար » : Հովիւը անոր ալ աս պատասխանը տուաւ. « Եւ ապա, քիչ ժամանակէն պիտի ծախուին այդ կաղնիները, և դու կրնաս տիրոջը քովն երթալ և ծախու առնել զանոնք » :

Երբոր օտարականները մեկնեցան, տղան ըսաւ իւր հօրը. « Հայրիկ, շատոնց ի վեր է որ կը ճանչնաս այդ մարդիկը » : Հայրը պատասխանեց. « Եւ առաջին անգամ է որ կը տեսնեմ զիրենք » : Կրկնեց տղան. « Ուրեմն ուսկէ՞ց գիտես, որ առաջինը ածխաղործ է, երկրորդը խաղախորդ, և երրորդը մագործ, որովհետեւ կարելի չէ զանոնք տեսնալով միայն ինչ արհեստի տէր ըլլալին իմանալ, ինչու որ երեքն ալ զինուորի հագուստ հագած են » : Ճշմարիտ է, կրկնեց հայրը, որ կարելի չէ զանոնք իրենց հագուստէն ճանչնալ, բայց ես կրնայ խօսքերնէն իմացայ արհեստին, որովհետեւ ամեն մարդ իւր գործերուն վրայ յօժարութեամբ կը խօսի, մանաւանդ ամեն բանէն աւելի նախաձեռար կը համարի իրեն պիտանի եղանակներուն վրայ խօսիլ : Եւ այդպէս և առաքինի մարդիկ միշտ բարի բաներու վրայ կը խօսին, իսկ վատերը իրենց խօսքով զիրենք կը մատնեն, անոր համար ամեն մարդ գիւրաւ կրնայ ճանչնալ զանոնք և զգուշանալ անոնց օրինակին հետեւելու :

Բերնին խօսքերը կրնան ամեն բան յայտնել, ինչ որ մարդիկ կարծեն որտիմ խորը ծածկել :

Գեորգ Տ. Յարդ-Լիւն-Էն
Իւմայեղի. Աւ. Ժ. Կ. Կ.

Փորձութիւնք ևս, նորա հետեւանքը (1):

Ըմեն օր Տէրունական աղօթքի մէջ
ասում ենք. « Եւ մի տանիր զմեզ ի
փորձութիւն Կ. Թէ և Կոտուած մեզ
ամենայն օր ամենայն փորձանքն էրից
պահպանում է, բայց երբ որ մենք
խնդրեալ գիմում ենք դէպ ի նորա, այն
ժամանակ Կոտուած անդարտ է, իսկ
մենք պատճառ ենք դառնում մեր
Թշուառութեան. ինչպիսի որ մարտ
ածոյ 11ին պատահեցաւ Վրաստանի
Տփլիս քաղաքում որ ի Ռուսաստան
այս հետեւեալ անցքը:

Մի հանգուցիալ հայազգեայ (որ է
Յովհաննէս Աղաբեկեան,) որդին
Ղըքսանդր անունով, անդրանիկ և
ծնողի շատ սիրելին, մանկութիւնից
սիրում էր ձի հեծնել և ժամանակ
առ ժամանակ հեծնում էր մի սովոր
և բնութիւն ձիու վերայ. բայց այս օր
րաժ ձին այն հետեւանքն ունեցաւ
նորա կեանքի վերայ, որ կարճ ժա-
մանակում մի անակնկալ հիւանդու-
թիւն եկաւ նորա վերայ և յետոյ մահ.
Փետրվար ամսին Վասիլ քաղաք կոչուած
գիւղից եկաւ առեւտրական գործի
մասին Աղաբեկեանի հին ծառայող-
ներէից մինը և իջեւանեց նոցա տանը:
Մի ամբողջ ամիս այն ծառայի ձին կա-
պած էր Աղաբեկեանի տան սրա-
հումը (ախոք) և Ղըքսանդրը ամե-
նեւ ին մտքում չէր անցկոյրել նորա
վերայ հեծնել, բայց կարծեալ թէ մի

նախազգուշութիւն էր արած նորա
համար, և մարտի 11ին կամեցաւ ան-
պատճառ ձի հեծնել երեկոյեան 8
ժամին և չըջել. Չնայելով մօր ար-
գելքին և ձիու ընդ գիմութեանը՝ որ
չէր կամենում գնալ, 5 րոպէ ժամա-
նակ խնդրելով մօրից՝ ճանապարհ ըն-
կաւ դէպ ի հրապարակ, բայց 5 րոպէ
չանցած՝ և ահա ողորմելի Ղըքսանդ-
րին բերին սուէն ձախու ոտքը կտոր
կտոր եղած:

Երեւանսկի հրապարակում ձին
վայր ընկնելով նոտողի վերայ՝ փախաւ
շուտով. բայց մեր հեծելաղօրը ոտքը
կորցրեց. Վլ զորմանալի է նորա այս
ցաւին համբերութիւն. անկողնի մէջ
միայն այնով միտթարում էր տառա-
պեալ մօրը թէ՝ « անցեալը անդառնա-
լի է Կ. Վին երեկոյեան և եթ ամե-
նայն հնարք գործ դրուեցաւ մի ճար-
տար վիրաբոյժի օգնութեամբ և 7 օր
առողջ էր, խօսում էր և սփնչ հա-
մարեալ էր դպում, բայց ու թերորդ-
օրը ճիւղքների մէջ երեւցաւ մի ցաւ-
երակներէ կրճատուելուց և ողորմելի
Ղըքսանդրը դժուարութեամբ էր
բերանը բաց անում. Շուտով հրա-
ւիրեցին քաղաքի բնակիչ բժիշկներ և
կաղմուեցաւ խորհուրդ. նորա ցաւը
քննելու, և խորհուրդը որոշեց ցաւը
այն է երակների կրճատումն որ ոտքի
երակներից առաջացան, և վճռեցին
որ սա հազուադիւրս եւ անբժշկելի
ցաւ էր՝ որ հինգ հարիւր հիւանդից
հազիւ առողջանում է մինը:

Թող պատկերացնենք ոյժմ Ղըք-
սանդրի մօր դժբախտ դրութիւնը,
երբ որ խնցաւ խորհուրդի վճիռը
և իւր սիրելի սրգուց կեանքից բա-
ժանման կորճ միջոցը. իսկ Ղըքսան-
դրը միտթարում էր անկողնից մօրը
թէ՝ նա չուտ առողջանալու է:

Խորհուրդի մտղարէութիւնը կա-

(1) Այն ցաւալի դէպքին պատմութիւնը հան-
դերձ դամբանական ծառիւ Տփլիսէն յաղարկած
էին մեզ Սիմէն մէջ հրատարակելու համար, զոր
բոս խնդրայ մեր թղթագիրն փախալիցն այս ան-
գամ առանց ըզուրն ձեւը փոխելու իրոյս ընծայ-
ել, առաւել առ ի փորձական իրատ և ի գգուշու-
թիւն աղայց և երկատարողաց, որանք դժուարա-
նան զսպել իրենց չափաւրանք միտումը որ և է հեշ-
տութեան և կրկն մէջ, անսասանելով ճնողաց, դառ-
ափալակաց և բարեկամաց կենսական իրաւանքն և
պատուէրն:

տարուեցաւ . և մարտի 27^{ին} գիշեր-
ւան 2 ժամին Մղեքտանդը փոխեցաւ
ի Տէր անտանելի չարչարելուց յետոյ,
որ չլըծֆօրճ անուշով դեղը ըթին մօ-
տեցնելով ննջեց և հոգին աւանդեց :

Թաղման հանդէսը կատարուեցաւ
մարտի 29^{ին} մեծի պահոց վեցերորդ
չարաթի Վալստեան կիւրակէ օրը .
նորա դադալը չըջապատել էին իրան
հետ մի դատաւան մէջ ուսանող ըն-
կերները, ու դարկաւորելով դէպի Սոզ-
նոյ սուրբ Վէորդ եկեղեցին : Սուրբ
պատարագից յետոյ իրան ընկերները
չորս դամբանական ճառ կարդացին
իրանց սէրը և համակցութիւնը ցոյց
տալու համար . բայց հանգուցեալը
երկար ժամանակ սովորելով ինձ մօտ,
պարտ համարեցի նորա գերեզմանի
վերայ ես ևս կարգաւ հետագայ դամ-
բանական ճառը :

Սիրելի՛ համագրիներ :

Յաւ է ինձ այս հանգուցեալ
պատանեակի վերայ խօսել . բայց կա-
մենում եմ յիշել սորա մանկական օ-
րերը և այս վերջին կեանքի պսակը :

« Երբեք մուտ ամենեցուն յաշխար-
հըս , և մի եւ հառարակացոյ . ասում է
Սողոմոն , որ շատ ճշմարիտ է և մենք
այս ճանապարհի վերայ նայն այս վեր-
ջին կենաց կեքելուն ստատում ենք .
բայց այս հատակիս մէջ կնքել իւր
կեանքը՝ թէ ի՞նչ քան օրոտմութիւն
պէտք է պատճառէր իւր ծնողին և
սիրելիներին , ամենքիդ յայտնի է և
ես չեմ կարող մի առ մի նկարագրել :

« Եւ , մանուկներ , մանուկներ ,
ի՞նչ քան վտանգաւոր են ձեր տարի-
ները » , ասում է մի բանաստեղծ ,
ի՞նչ քան տարաբաղդ էք ձեր կեանքի
ընթացքի մէջ , որ չէք կարողանում
հեռատես լինել ձեր ասագային :

Եւս հանգուցեալը անցեալ տա-
րի 16^{ին} ապրիլի , կորցրեց մի պատուա-
կան հայր , որ ամենայն հնարք դործ
էր ամսամ որդւոց մտաւոր զարգաց-
ման համար , բայց նորա պատճառած
կսկիծը արդէն փոքր առ փոքր անհե-
տանում էին՝ թաղնելով իրան փոխա-
րէնը այս հանգուցելուն անձը . բայց
ես այժմ իրան մօր և բարեկամաց
օրոտմութեան պատճառ դարձաւ վե-
րանորոգելով և անցեալը :

Սա որոշուեցաւ իւր ընկերներից ,
ծնողից և աղգականներից , այս վըշ-
տալի և անցաւոր աշխարհից դէպի
յաւիտենականութիւն դարձրեց իւր
երեսը , անտանելի կսկիծ եւ ցաւ
պատճառելով իւրեաններին . մի թէ
հասակը կամ ծերութիւնը էր դատ-
ճառը . մի թէ ցաւը երկար ժամանակ
հալեց և մաշեց սօրսն , մի թէ երկար
հիւանդութիւնը ծանրաբեռնեց սօրս
վերայ այս լուծը . ո՛չ , քաւ լիցի , ոչինչ
պատճառ չկար սորա այս դրութեք ,
բայց ի սորա երեսայական անփորձ
տարիքը , երեւակայութիւնը և դե-
ռավթիթ հասակը :

Վանկութեան օրից ուսման ճա-
նապարհին դիմեց այն յոյսով որ ժա-
մանակով իրան մտաւոր լուսաւորու-
թեամբ լոյս տայ իրան և իւր ծնողին .
բայց աւանդ , 17^{ին} տարեկան հասակում
կնքեց իւր կեանքը անմեղութե՛ մէջ ,
երբ որ մէկ տարուց յետոյ արդէն
աւարտելու էր իւր ուսումը և աղգի
մէջ մի անգամ դառնալու , բայց ա-
հա մի միայն տրամութիւնը և ցաւը
եղան սորա վատասկները , որ թողեց
իւր ծնողն համար :

Եւ , ճակատագիր , ճակատագիր ,
ի՞նչ խորհրդաւոր դադունք ունիս մի
քօղի տակ ծածկուած , որին մարդ-
կային տկար բնութիւնը չէ կարողա-
նում հասկանալ , ահա այսպիսի ծա-

դիկ հասակներ ես կուլ ձգում դժընդակ մահուան բերանը :

Մհ, մահ, ինչպէս դառն է քո արմատը , որ չինայեցիր այս տեսակ նորատունիկ ծաղիկ հասակը , ինչու ուրեմն հալեց ու մաշեց սա իւր կեանքը ուսման մէջ , երբոր այսպիսի կարճ ժամանակում խելիւ էիր սուրանից բնութեան և աշխատանքի պարգեւները :

Դուք , իմ սիրելի հայեր , որդւոյ տէրէք մտածեցէք այս տարաբախտութեան հետեւանքի վերայ , ինչ մարդ , ինչ ծնողական սիրտ կը լինի , որ այս տխուր հանդիսի վերայ արտասուք չթափէ . միթէ փոքր կոկիծ է այժմ սորա ծնողի սրտի համար՝ տեսնելով իւր որդին առաջը տարածուած աւշունչ , աչքերը փակուած , լեզուն պապանձած , շրթունքները անշարժ , կերպարանքը դունաթափ , էլ չէ խօսում և մօրը մխիթարում , արգարե դժուար է տանել այս տեսակ ցաւը :

Եւ յիշե՛ք , իմ հոգեյս եղբայր , ո՞ւր ենք աշխատութեան պտուղները որ այսպէս շուտով թողնելով աշխարհ՝ դէպի յաւիտեանականութիւն ես գընում :

Պրիդոր՝ խլտացւոյ նման ողբում եմ քեզ , վայ ինձ , մանուկ , ինչու այդպէս շուտով ես իջանում դէպի հողը , ինչու ծառի տերեւ ինձան ծաղկեցար և ծաղկով լցուեցար , երբոր այդպէս շուտ թառամելու էիր և չուրանալու պտուղ տալու դժամնակը : Երանի մի զարթնէիր այդ քնից՝ որ նախանձոտ մահուան թաղաւորը բերէլ է քեզ վերայ , երանի մի ձայնովդ գոնէ ուրախացնէիր ինձ , միանգամ հարկաւոր էր քեզ ընկնել քո մօր աւտանից վերայ , որանցովստացարանունդ , միւսանգամ ընկնէիր նորա պարանո-

ցի վերայ և մխիթարէիր նորան . բայց , լուռ ես , չեմ լսում ձայնս , ո՛հ , ինչ պէս մոռանում քեզ , ինչու քո երեխայական արգասիքը անժամանակ ոչ չընչացիր :

Մհ , մայր իմ , ընդէ՛ր ծնար զիս այր տառապեալ և փսն սակաւ աւուրց . սիրելի իմ մայր , ես չկարողացայ իմ պարտաւորութիւնիցս դուրս գալ , ներքի ինձ ցաւալի մայր որ այսպէս շուտով քեզանից բաժանուեցայ , թէ և փոքր ժամանակից յետոյ՝ ես , նորատունիկ ծաղիկս պտուղ պէտք է բերէի և անուշահոտութիւնով բուրէի , բայց ահա մի շնչին փոխրակ թառամեցրից ինձ և արմատս խիլ արաւ այս անցաւոր երկրից , ես գնում եմ անանց կեանքը , բայց մեղաւոր եմ քո առաջ :

Շնորհակալ եմ քեզանից իմ մայր , որ ինն ամիս քո արդանդի մէջ պահեցի , շնորհակալ եմ իմ ծնող , որ ինձ քո կաթով մեծացրիր , շնորհակալ եմ իմ աչքիս լոյս , որ բաղուններովդ գրկեցիր . շնորհակալ եմ իմ սիրած մայր , որ ինձ ուսմամբ զարգացրիր , և վերջապէս շնորհակալ եմ բոլոր երախտեայդ համար և այդքան արտասուք թափելու դժամար : Ինչով կ'որոշէի վճարել քո բոլոր երախտեայ փախարէնը՝ իմ մտաւոր պտուղներով , բայց չտուած առաւել ինձ վարձաւորեց այս մեղապարտ աշխարհից հանելով , և անանց աշխարհը տեղափոխելով , միայն ցաւում եմ որ չկարողացայ քո երախտիքը վճարել , ես ճանապարհորդում եմ դէպի յաւիտեանականութիւն , մնաւ բարեաւ և կայ խաղաղութեամբ :

Մհ , անողորմ բաղդ , ինչու այդպէս շուտ ունայնացրիր իմ բոլոր որդիական սէրս և որոշէիր ինձ իմ սիրելի մօրից , ազգականներից , ընկեր-

ներկեց՝ որ ահա տմենը շրջապատել են ինձ և մորմոքում են իմ անդառնալի ուղեւորութեան վերայ, և կեանքից՝ որ համարեա նոր էի ծանօթանում նորա հետ :

Աւրեմն, իմ աղբակից աղնիւ հայեր, իմ՝ աչքիս լոյս ազգ, սրբազան դասք հոգեւորականաց, վէր ուղղեմք մեր աղօթքը դէպի Աստուած, և խնդրենք նորանից՝ որ այս հանգուցեալ Աղեքսանդրի հոգին Աթոռ հեմ անմեղ մանկիկներուն հոգւոյ հետ դասաւորեսցէ և երկնքի արքայութեանը արժանացուցէ, սուրա տառապեալ մօրը տայ համբերութիւն, որ մոռանայ այս կակիծը, որովհետեւ դեռ տարին չըացած իւր քաղցր ամուսնոյ մահուանից յետոյ, որդուն եւս ահա ուղարկւելու է դէպի նորանայն տեղ նոքա պէտք է գտնեն իրանց համար մի հանգիստ օթեւան :

Վասնորոյ, Վամբրնացւոյ հետ խնդրենք սուրբ Հոգուց, որ մխիթարում է արամեականերին, իջանէ այն սիրոյ աղբիւրը սիրով սորա մօր վերայ և մխիթարէ նորան ինչպէս մի պանդուխտ՝ որ այս անցաւոր կեանքի մէջ նեղանում է այսդիտի կու

րուստներից . թող սորա պախաւեալ օրերը Տէր Աստուած նորա միւս մնացած որդւոց կեանքի հետ աւելայնէ :

Այսպէս իմ սիրելի Աղեքսանդր, գնան բարեաւ, թող Աստուծոյ հըրեշտակը ուղեկից լինի քո հոգւոյն դէպի պատրաստեալ աւետեաց երկիրը, ինչ տեղ ոչ ինչ ցաւ և նեղութիւն չես տեսիլ, երեւի նորա համար այսպէս շուտ թողիւր այս անցաւոր աշխարհը, որ գնաս յաւիտենա կանութիւն և ուրախութեան մէջ մնաս յաւիտեան . ինչ երանութիւն տամ ես քեզ, ես մի շնչին արարածս և մահկանացուս . բայց յոյս ունիմ որ Աստուած անշուշտ ներելու է քո երեխայական սխալները և դասաւորելու անմահ հրեշտակների դասումը, ուր որ միշտ երջանկութեան մէջ մնալու ես . ուրեմն իմ աղնիւ եղբայր, գնաս բարեաւ ի Տէր :

29 Ֆարքի, 1870 .

Ի Վաղարշ Տիկիս :

Օ խոորական Սբեփանոս
Տէր Սարգիսեանց ուսումնա-
ւարդ ի Ներսիսեան աղգային
հոգեւոր դպրոց :

Թ Ո Վ Մ Ա Ս Ո Ւ Ե Ր Ի Յ Ո Ւ

Տ Ա Ղ Ք

Թուշուն գեղեցիկ, էր շուտով թըռար .
Միթէ դու չունիս տեղ սիրոյ հետ ինձ .
Սիրամարգի նման յոյժ զարդարեցար,
Յանկարծակի թռար, չխօսեցար հետ ինձ :

Աւրախ սիրտս տրամեց, ինչպէս սիրտս դոյ,
Բըռուլի նման կարօտ եմ քեզ տեսնելոյ .
Դու ես կարմիր վարդ, ես զուժրին եմ քոյ,
Շուտով առ իս դարձ, զըռուցիր հետ ինձ :

Սանուշիկի նման աւետիք գարնան ,
Եւ տեւօք գեղեցիկ ծաղիկ աննման ,
Վարդագոյն երեսօք տիպ արեգախան ,
Ե՛րբ կու գաս եւ ծագես քու արեւդ հետ ինձ :

Արի՛ արի , եկ իմ սիրուն սիրելի ,
Դու ծաղիկ անթառամ եւ վարդ գովելի .
Շողողեալ փայլ փայլեալ բոյսրդ երեւի ,
Թող այսպիսի կենօք անցանիս հետ ինձ :

Այրաս դու կապեր ես սիրով քո սրտին ,
Ես դարդով բըլբուլ եմ , դու նման վարդին .
Մի թողուր զիս կարօտ , ռահմ արա վարդ իմ ,
Այդ հեռի ճանապարհէդ մօտ դու եկ հետ ինձ :

ԺԱՄԱՆԱԿԱՊԵՐՈՒՄ

Կիսրոսի Արժանապատիւ Առաջ
նորդ բարեշնորհ Վուկաս վարդա-
պետը ներկայ ամսոյս դարձաւ ՚ի Ս .
Աթոս , ուսկէ հինգ տարիէ ՚ի վեր
բացակայ կը գտնուէր յիշեալ վիճա-
կին մէջ Առաջնորդութեան պաշտօ-
նը վարելով խիստ արժանաւորութիւն .
եւ իւր տեղը իբր փոխանորդ եւ տե-
ղապահ խրկուեցաւ Սաղաւարտի Ար-
ժանապատիւ Վարդան վարդապետը :

— Այս օրերս ամենացաւալի դէպք
մի սրտառհեցաւ տեղւոյս Ատինայ
գալոցին մէջ , զոր առ ՚ի խրատ եւ ՚ի
զգուշութիւն կը յիշենք հոս : Առ-
դարեթի երիտասարդ մի լատին կրօ-
նիւ , եւ քանի մի ժամանակէ ՚ի վեր ՚ի
բողոքականութիւն դարձած , ուզելով
Քրիստոսեանք կրկին շահել անոր հո-
գին եւ մօրմնաւոր ապրուստ միեւս հո-
գալ առ ՚ի հաստատուն մնալու իւր հայ-
րենի կրօնին մէջ , գալոցի մէջ արա-
բերէնի գասատու կը կարգեն առանց
գիտելու թէ մանկավարժութեան եւ
գաստիարակութեան կարեւոր հըմ-
տութիւնն ու յատկութիւնն ունի
թէ ոչ : Քիչ ժամանակին մէջ նա իւր
խակութիւնը ցոյց տուաւ իւր մէկ
բարբարոսական դործով : Աշակեր-
տաց մէկը դիտուածով իւր գրքին

վրայ մեղան թափելով սաստիկ կը բար-
կանայ եւ ոտքի մուծակովն այնպէս
անգթութեամբ կը զարնէ խեղճ տը-
ղուն կուրծքին եւ կշտերուն որ անմի-
ջապէս տղան կը մարի եւ տուն կը տա-
նին զինքը : Հօրեղբայրը զայն տես ,
նեղով եւ դայրանալով դատաւորին
բարբարոս վարմունքին , անմիջապէս
գուրս կ'ընէ եւ գժբաղդաբար նորա
հանդիպելով շուկային մէջ , թշնամա-
նելով վրան կը յարձակի եւ լու ծեծ
մի կուտայ : Իսկ խեղճ աշակերտը տասն
օրի չափ հիւանդ պառկելով ամսոյս
24 ին հոգին կ'աւանդէ ինը տարե-
կան հասակին մէջ ՚ի մեծ կոկիճ իւր
ճնողացը՝ սոնց մէկ հատիկէն էր :

Բժիշկներ կառախորութեան կող-
մէն քննութեան երթալով եւ հաստա-
տելով տղուն մահը կերած ծեծէն
պատճառած ըլլալը , անմիջապէս զգա-
սատուն բռնել տալով կը բանտարկէ ,
թէպէտ եւ Ատինայ վանքը շատ ջա-
նաց որ ազատէ զայն :

Թող իմանան գաստիարակք եւ
մանկավարժք եւ զգուշանան :

— () Գոստոսի ամսոյն Սոնի մէջ սը
Տեղեաց քննութեանց վրայօք տրուած
տեղեկութիւնները անստոյգ ըլլալով ,
սգարօք կը համարիմք մեզ հետեւ ել
թուով անսոնց ճիշտ տեղեկութիւն
ները տալ :

Յ Լ Ն Կ

Հ Ո Կ Տ Ե Մ Ի Ե Ր

Խղճի աղատութիւն .	223
Ղշմարտութիւնք .	228
Սեծապատիւ ժողով . Կանանց զարգացման և կրթութեան վրայ .	232
Կատոնի՝ յաղագս ուսման բարւոք կենցաղաւարելոյ .	235
Դպրոցական արդիւնք .	238
Խսկումն մահու .	239
Յանցումն մարդոյ .	240
Լեւ Կ . գեղեցիկ կաղնին .	241
Փորձութիւնք և նորահետեւանքը .	242
Տաղ թովմաս երկցու .	245
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	246

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա . Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութամս թղթով :
- Բ . Տարեգլուխը Մայիս 1 էն կ'ըսկըսի :
- Գ . Բաժանորդագրութիւնը Պօլսոյ համար 5 արծաթ Մէճիտ է . իսկ դաւառաց համար 5 ու կէս . կանխիկ վճարելի :
- Դ . Զատ տետրակ առնել ուղղը , պէտք է ամեն մէկ տետրին չորս դաւ հեկան վճարէ :
- Պօլսոյ մէջ բաժանորդագրութեան տեղին է Մերձան (Թիւ 2) և Քիւրքճի խան վարի յարկ՝ Թիւ 45 , Մարգարեան և Սրապեան ընկերաց Գրատունները :